Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՔԱՄԱԼԵԱՆԾ Ս.

ԽՈՒԼ ԽԱՉԻԿ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԻՊԵԼ

(ԺԱ. դարու սկզբ.).

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳԻՆԸ Է 25 ԿՊ.

ԹԻՖԼԻՍ
Տպարան «ՀԵՐԱՆԻ» Ընկ. Մաղաքեանի փողոց № 15
1905 (99)

13 APR 2011

891.99
Ք-17

ՔԱՄԱԼԵԱՆՑ Ս.

ԽՈՒԼ ԽԱՉԻԿ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊԻԿ

(ԺԱ. դարու անցք).

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Հանրային Գրադարան
Публичная Библиотека
1921—1922
Ս. Մազանկեան անվան

Книжн. магаз. „Посредникъ"
Баку
Порапет

ԹԻՖԼԻՍ
Տպարան «ՀԵՐՄԷՍ» ԸՆԿ. Մադաթեան փողոց № 15
1905 (99)

2 9 .08. 2013
60324

Дозволено цензурою. Тифлисъ, 20 Мая 1905 г.

(Ցամաքային) Կամրջի
Ցամաքի ղեկավարություն
Բանկ Հայաստան

ԽՈՒԼ ԽԱՉԻԿ

Ա.

Վառպուրականը շատ գաւառներ ունէր։ 1021 թուից ամենն էլ մնացել էին անտէր ու անխնամ. նրանց տէրերը Արծրունի Սենեքերիմ թագաւորի հետ հեռացել, գնացել էին Սեբաստիայի կողմերը։

Միայն մի գաւառ իւր տէր ու իշխանն ունէր. որը չէր միւսների նման։—Թոռնեանն էր այդ, և նրա տէրը Խաչիկ Արծրունին, մականունով Խուլ։ Միակ իշխանն էր, որ թագաւորի և բոլոր պաշտօնեաների կամքի հակառակ վճռել էր մնալ իւր հայրենի հողի վրայ. գերադասել էր իւր աշխարհի թշնամիների դէմ քանի շունչը բերանումն է, կռուելով մեռնել, քան թէ օտարին ծառայելով փառք մուրալ, պատիւներ ստանալ։

Եւ ի՞նչ կըսազար Խաչիկին մուրացկանութիւնը։ Չէ՞ որ նրա միայն անունը սարսափ էր ազդում թշնամուն։ Ամեն տեղ յաղթող էր, ինչպէս անպարտելի դիւցազն և հուժկու ու վսեմ,

ինչպէս առիւծ։ Դրա համար էր, որ Արծրունեաց գլխապետ Խաչիկից որոշելու համար ժողովուրդը Թոռնեանի տիրոջը անուանում, կանչում էր Առիւծ Խաչիկ։

Երկար տարիներ նրա ոսկորն ու կաշին մխուել, ամրապնդուել էին անթիւ պատերազմների շկահիւնների մէջ։ Միակ մարդն էր, որ անհաշտ թշնամի էր հայրենի դահը վտանգողին։ Սենեքերիմի ժամանակ քանի՞ անգամ յարձակուեց Թաթար ու յոյն ասպատակ զօրքերի վրայ ու սահմաններից դուրս քշեց. բայց ծերունի թագաւորը խօսքով անգամ չըքաջալերեց նրան, այլ սրտապատառ թողնելով հայրենի երկիրը վերկացաւ, իւր հետ առաւ զօրքն ու ժողովրդի մի մասը և գնաց...։

Մնաց Խաչիկը կռնատուած և ակամայ յոյն կուսակալների առաջ ճկուած։

Սենեքերիմի հետ կապած դաշնագրի համաձայն յոյները տէր դարձան Վասպուրականին։ Եկան կուսակալներ, կառավարիչներ. անծանօթ լինելով երկրին, ժողովրդին՝ փոխուեցին իրար ետնից։

Խաչիկը քաշուած իւր Թոռնեան գաւառի Նկան բերդը, ապրում էր այնտեղ Հասան և Ճնճղուկ քաջ որդիների հետ։ Յոյն կուսակալները պատկառելով նրանից չէին խառնուում նրա գաւառի գործերի մէջ։ Նա անկախ էր իրրև ազատասէր հոգի և այդպէս էլ մնաց մինչև 1034 թ.։

Հզօր առիւծի պէս Խաչիկը փակուած էր գառագիղի մէջ։ Նրան շատ էին առաջարկում կայսեր բանակում զօրավարի պաշտօն ընդունել և աննշան Թոռնեանը թողնել, բայց նա ոչ միայն ինքը չէր յօժարւում, այլ որդոցն էլ խորհուրդ չէր տալիս, որ գնան նենգաւոր օտարին փառքի համար ծառայեն։

Երբ նկատում էր, որ մի քանի հայ իշխաններ՝ արաբ ամիրապետի ընծայած զգեստներով զարդարուելով կամ կայսեր ուղարկած ոսկիներով հպարտանալով՝ ուզում են իւր որդոցը գայթակղեցնել ու իրանց շաւղով տանել, Խաչիկը այդպիսիներին անխնայ շանթում էր թէ խօսքով և թէ գործով։ Դրանով նա հակառակորդներ շատ էր վաստակել։ Նրան խուլ էին կանչում, բայց մեծ խուլը իրանք էին, որ փառամոլութեամբ ու օտարասիրութեամբ կուրացած և խլացած՝ ոչ տեսնում էին հայրենիքի բաժան-բաժան լինելը և ոչ լսում նրա դառն հեծեծալը։

Այս ամենը տեսնում ու զգում էր Խաչիկը. սրտի կսկիծից վիրաւոր առիւծը մռընչում էր և խոշոր ընչացքները ոլորելով ման ու ման անում Նկան բերդի աշտարակի առաջ։

Ամբողջ 13—14 տարի էր, որ Սենեքերիմը հեռացել էր Ոստան մայրաքաղաքից. այդքան միջոցում անթիւ կառավարիչներ էին նշանակուել և անդադար փոխուել։ Մինը միւսից վատթար և կեղեքիչ հոգիք։

Այդ ամենը դիտում էր աչքի տակով Խաչիկը, խոր խոցւում և Վասպուրականի սև օրը լալիս։

Բ.

1034 թ. էր և Վասպուրականի վրայ կայսեր կողմից կառավարիչ էր նշանակուած Մանեակը։ Սրա ականջը շատ աննպաստ տեղեկութիւններ էին հասել Խաչիկի մասին. ասել էին չար անձինք, որ նա տէր ու իշխան է Վասպուրականի, որ նա հնազանդել չի կամենում կայսեր, որ նա մտադիր է իրան թագաւոր հռչակել Սենեքերիմի տեղ իբրև Արծրունի։

Միքայէլ կայսրը, որ յունաց գահը արիւնով էր յափշտակել, հայոց թագն էլ ժառանգելու խիստ ծարաւ ունէր, հաշտ աչքով չէր նայում Խաչիկի պէս դիւցազնի վրայ՝ նրա մասին այնչափ կասկածներ լսելուց ետը։ Վճռել էր նրան Հայաստանի սրտից հանել և Արծրունի տոհմի ազդեցութիւնը ժողովրդի միջից խսպառ ջնջել։

Մանեակը Վասպուրական ժամանելուն պէս առաջին գործն այն արեց, որ հրաւիրեց իւր մօտ Խաչիկին։ Քաղցր ընդունելուց ետ շատ ընծաներ առաջարկեց այն պայմանով, որ համաձայնի զօրավարի պաշտօն ստանձնել և կայսեր զօրքում ծառայել։

—Կայսրը պատերազմի է պարտաւորում, ասեց Մանեակը, փորձառու զօրավարների և կարիճ զինուորների չափազանց կարիք ունի։ Ինչու ես անգործ նստել. փառքն ու պատիւը քեզ ու քո կարիճ որդիներին են սպասում։ Այստեղ, այս աւերակ Վասպուրականում ի՞նչ կայ, որ նըստել ես։

—Ես ալեւոր, ուժից ընկած մարդ եմ, պատասխանեց Խաչիկը, այսուհետև ինձնից ի՞նչ օգուտ կարելի է յուսալ։ Այսօր կամ վաղը շունչս փչելու եմ. աղաչում եմ, տէր, թողէք իմ հողի մէջ թաղուեմ։ Այդ մխիթարութիւնից մի զըրկէք ինձ։

—Որդիներիդ համար ի՞նչ կասես, նրանք հօ ծեր չեն, հարցրեց կուսակալը ժպտալով։

—Տէր իմ, նրանք ծեր չեն, բայց այնքան խելահաս չեն, որ օտարութիւն գնան ու իբրև զօրավար շահաւէտ լինեն։ Նրանք դեռ շատ մատաղ են և հաղիւ կարողանում են Թոռնևանի սահմանները պտըտել։ Զօրք կառավարելու մէջ նրանք անվարժ են, տէր իմ։

Խաչիկն համ այս խօսքերն ասում էր, համ զողզողում, զգալով իւր ստախօսութիւնը։

Նրա որդիքը ոչ թէ մատաղ, այլ մի մի հըսկայ էին համեմատելով հէնց Մանեակ կառավարչի հետ, որ քաջ զօրավարի հռչակ էր վայելում ամբողջ կայսրութեան մէջ։ Զօրք բանացնելու և ճակատներ կազմելու մէջ Հասանն ու Ճնճղուկը, եթէ Խաչիկին հաւասար չէին, գէթ պակաս էլ չէին նրանից, որովհետև ինքն էր մարդել ու վարժել նրանց, որ իւր մահից ետ Թոռնևա-

նը պարծենալու իրաւունք ունենայ իւր իշխաններով։

—Ինչ վերաբերում է նրանց անվարժութեան, անհոգ կաց, Իշխան, վրայ բերեց Մանեակը, այդ պակասութիւնը հեշտ է լրացնելը։ Միայն այն է ինձ դժուարութիւն պատճառում, որ դու ասում ես, թէ նրանք շատ մատաղ են։ Կանչել տուր, տեսնենք։ Ինչքան էլ տարիքով փոքր լինեն, ես կարծում եմ, նրանք կորուկ ու վարթամ կը լինեն իբրև կորիւններ։

Յետոյ կառավարիչը Խաչիկի սիրտը շահելու համար աւելացրեց.

—Չէ՞ որ նրանք Առիւծ Խաչիկի որդիներն են։

Ծեր Խաչիկը հէնց այդտեղ սրտումը լաց եղաւ, տեսնելով, թէ ինչ խորամանկ, քաղցրալեզու աղուէսի է պատահել. ահով գուշակում էր, որ այդ քաղցր լեզուն կարող է իւր որդիներին գլխից հանել։ Իշխանը Մանեակին ասեց.

—Կարիք չկայ ուրիշ մարդ ուղարկելու, ինքըս կը գնամ և իմ որդոց կը բերեմ։

Նկան բերդը հասնելով Խաչիկը ժողովեց որդոցն իւր մօտ և տխուր ձայնով խօսեց.

—Այժմեան կուսակալը, որդիք, մի վտանգաւոր անձն է. ինչպէս նկատում եմ, ուզում է Թոռնեանը Վասպուրականի միւս գաւառների օրին հասցնել։ Արծրունեաց ճրագի վերջի պատրոյգը հանգցնելու ետնից է։ Թոռնեանի ապահով վիճակը և անկախութիւնը փուշ է դարձել ծա-

կում ամենի աչքն էլ։ Մեր երկիրը աւերելու համար աշխատում են մեզ մեր հողից ու ջրից հանել։ Այդ չար նպատակը յայտնի կերպով անկարող լինելով գլուխ բերել, առաջարկում են ինձ զօրավարութիւն յանձ առնել կայսեր բանակում։ Ի հարկէ ես մերժեցի։ Բայց այժմ ձեզ են ուզում առաջարկել այդ պատիւը, հետն էլ շլացնող խոստումներ։ Խորամանկները Ք՚ըբ չեն միամիտներին այդ միջոցներով գայթակղեցրել ու խաբել։ Սկզբից յայտնելով ձեզ այս մասին զգուշացնում եմ, երբ յոյն կուսակալին կը ներկայանաք, խոհեմ խօսեցէք, աւելորդ բառ բերաններիցդ չը-թռցնէք։ Զսպեցէք ձեր եռանդը, երբ նա ձեզ գովելիս կըլինի։ Մեղք եկէք ծերութեանս ալիքներին. ոչ մի խոստումով չը յօժարուէք նրա առաջարկն ընդունելու, եթէ անգամ նա ձեզ թագաւորութիւն խոստանայ։

Այս նախապատրաստութեամբ Խաչիկը որդիների հետ ձի նստած գնաց Ոստան, ուր սովորաբար լինում էր կուսակալի աթոռը։

Մանեակը Հասանին ու Ճնճղուկին տեսնելուն պէս հիացաւ, ապշեց նրանց պարթև ու աննման հասակի վրայ.

—Խաչիկ իշխան, ոչ միայն ես, այլ և Միքայէլ կայսրը կը նախանձի քո վիճակին։ Սրանց համար էիր ասում, թէ մատաղ են, փոքրահասակ են։ Մի՞թէ չարախօս չէ՞ այն մարդը, որ գլանում է սրանց դիւցազուններ անուանել։ Ի՛սկ

դիւցազուններ են և բոլորովին արժանի կայսեր տեսութեան։ Այսպիսի անման կարիճների պատճառով է, որ Հայաստանն այնքան սիրելի է կայսեր աչքում։ Թէև այսօր իշխանազուն են, բայց թագաւոր լինելու էլ ասող ունեն։ Իբրև քո բարեկամ ես ոչ մի պայմանով չեմ յօժարուիլ, որ այս փայլուն ասողերը մութ աշխարհում խաւարեն, անյայտանան։ Սրանց ինձ մօտ կըպահեմ ու վերջն էլ կըտանեմ կայսեր պալատը, որ նրա մօտ պատիւներով պսակուեն ու ապագայում գալով թագաւորեն իրանց աշխարհի վրայ.

Ապա դառնալով պարթևահասակ Հասանին ու Ճնճղուկին խօսեց.

—Քա՛ջ իշխանազունք, լսեցի՞ք թէ ձեզ ինչ փառքեր են սպասում։ Ուրեմն մօտ եկէք և կայսեր պատկերի առաջ չոքեցէք։ Թող այդ ապացոյց լինի, որ դուք կամք և յօժարութիւն ունէք կայսեր ծառայելու։

Պատանիքը սկզբում տեղն ու տեղը մնացին մեխուած՝ իրանց հօր երեսը նայելիս։ Զգիտէին ի՞նչ ասեն, ի՞նչպէս վարուեն, որ ոչ կուսակալի պատուաւոր առաջարկը մերժեն և ոչ հօր զայրոյթը գրգռեն։

Մանեակը խորամանկ աղուէսի պէս իսկոյն հասկացաւ պատանիների հայեացքից նրանց սրտի մտածմունքը։ Նկատեց որ նրանք կարմրում են հօր երեսը նայելիս, և չեն համարձակւում իրանց սրտինն ասել, որ եկել էր լեզուին դէմ ընկել։

Առաջուց խոստումների, պատիւների մասին խօսելիս նկատել էր, որ իշխանազունների աչքերը ագահութիւնից փայլում են։ Գուշակում էր, որ որդոց ասելիքը հօր սրտովը չպիտի լինի։ Դժուարութիւնը հեռացնելու համար Մանեակը դարձաւ Խաչիկին ասեց.

—Որդիներդ նախ քան խօսելը երևում է, իրաւունք են ուզում խնդրել։ Կեցցեն խոնարհ զաւակները։ Իրաւունք ես տալիս, որ ազատ խօսեն։

Խաչիկը որ աւելի շուտ էր կարդացել անփորձ և միամիտ կորիւնների աչքերում նրանց սրտինը, չիմացաւ ի՞նչպէս զսպի իւր յուզմունքը. շտապով վրայ բերեց.

—Իրաւունք ունեն խօսելու.... բայց կարող են սխալ խօսել, չափազանց եռանդը առ հասարակ արգելք է լինում ճիշտ դատելու։ Չէ՞ որ նրանք եռանդոտ կորիւններ են միայն։

—Ընդհակառակը նրանք չափահաս մարդիկ են, աւելացրեց Մանեակը։ Յետոյ դառնալով նրանց.

—Ապա՛, խօսեցէք համարձակ, ձեր հօր հետ ես ևս իրաւունք եմ տալիս։ Կամենում էք ձեր հայրենիքին օգտաւէտ լինելու համար կայսեր բանակի մէջ ծառայել։ Եթէ համաձայն էք, չոքէք կայսեր պատկերի առաջ և երդուեցէք։

—Յօժար ենք, միաձայն գոչեցին տխմարացած Հասանն ու Ճնճղուկը և առաջարկը կատարեցին խոնարհութեամբ։

Մանեակ կուսակալը այն ժամանակ ներկայ եղողների առաջ ուրախագէմ յայտարարեց հետևեալը։

—Այսօրուանից ձեզ ընդունում եմ ձեր զօրքով մեր բանակի մէջ։ Վաղն և եթ հզօր կայսրին կաւետեմ այդ մասին։

Յետոյ դէպի Խաչիկը դառնալով ասեց.

—Շատ հայրեր երանի կըտան քեզ, երբ որդիքդ փառքով ու բարձր աստիճաններով փարթամացած կը վերադառնան իրանց աշխարհը։

Խաչիկը յուզմունքից մի խօսք անգամ չկարողացաւ արտասանել կուսակալի մօտ. միայն կարկամուած։ Ո՛ւմից, որ իշխանից թեթևամտութիւն, անհնազանդութիւն ասէին, Խաչիկի հաւատալը կը գար, բայց իւր հարազատ Հասանից ու Ճընճղուկից այդպիսի դաւաճանութիւն, երբէք չէր սպասում։

Նկան բերդը դառնալով սրտամորմոք հառաչում էր աւագ աշտարակը քաշուած.

—Ա՜խ, թեթևամիտ զաւակներ, դուք էլ ապերախտ ժառանգներ հանդիսացաք։ Ձեզանով յոյս ունէի կորցրածը գտնել, տանուլ տուածը վերադարձնել, ինչո՞ւ յաւիտեան ձեր ծերունի հօրից խլեցիք այդ միխիթարութիւնը։ Մի՞թէ ձեզ գրկումս նրա համար խնամեցի, որ վերջը գնաք օտարին ծառայէք, նրան խնարհ վիզ թեքէք. ինչո՞ւ յոժարակամ ընդունեցիք այդ լուծը։

Հասանի ու Ճնճղուկի սիրտն ու հոգին

անուշած, վարժուած էին պատերազմի համար. իրանք կրակոտ էին, բայց երկար ժամանակ անգործ նստած հայրական բերդում։ Ոչ ոք չէր համարձակվում շրջակայ թշնամիներից Թոռնեանի վրայ յարձակում անել։ Ձանձրացել էին կարծես պարապութիւնից։ Այդ միջոցին անուանի Մանեակը նրանց առաջարկում է մեծամեծ պատիւներ, միայն թէ յանձն առնեն հայկական զօրքով կայսեր բանակում ծառայել։ Եռանդները շատ, գայթակղութիւնը մեծ։ Խաբուեցին և իրանց որոշման վրայ մնացին հաստատ. ականջ չդրին հօր ոչ թախանձանքներին, ոչ յանդիմանութիւններին, ոչ սպառնալիքներին։

Խաչիկը չէր կարողանում կուսակալի ներկայութեամբ ակնյայտնի ընդդիմանալ որդիների գնալուն. բայց երբ Հասանն ու Ճնճղուկը՝ Թոռնեանի հինգհազարեան զօրագնդի գլուխն անցած՝ ուղևորւում էին Նկանայ բերդի տակով դէպի Կ. Պոլիս, առիւծասիրտ Խաչիկը խրոխտաձայն գոռաց բարձրից, աւագ աշտարակից.

—Գնացէք, անուշակալ որդիք, գնացէք, բայց կը հասնի՞ մի ժամ, մի օր, երբ կարեվէր սրտով կը փոշմանէք ձեր արածի վրայ։ Դեռ միամիտ էք. դառն փորձերից ետ կը հասկանաք միայն, թէ հայրենիքի փուշը որքան քաղցր է օտարի նուշից։ Գուցէ մի օր կը փնտռէք ինձ որ խոստովանէք, թէ որքան ճշմարիտ էին ասածներս, բայց այն ժամանակ գերեզմանս միայն կը գտնէք...

Գ.

1040 թ. Վասպուրականը ներկայացնում էր մի անտէր, քարուքանդ այգի։ Ով ասես, տէր էր և հրամայող։ Մի կողմից արաբն էր կողոպտում, միւս կողմից թաթարն աւերում։ Ժողովուրդը բացի այդ առպատակներին լիացնելուց՝ խոնարհութեամբ յունաց կայսրին էլ հարկ էր տալիս, իբրև խնամակալի... բարեգութ խնամակալ, որ բարբարոսների ճանկերից մնացածն էլ ինքն էր խլում։

Այդ նեղութիւնների տակ տառապում էր հայ ժողովուրդը և հեծում։

Խաչիկ իշխանը ամենն էլ տեսնում էր։ Նախ մորմոքւում էր սրտում, բայց նկատելով որ հայ ժողովուրդը վախից խոնարհութեամբ տանում է ամեն տանջանք, աւելացնում էր.

—Արժանի է քեզ այդ լուծը, տանջուիր, հայ ժողովուրդ, քանի որ վախկոտ ես։ Քեզ ով էր ասում ձեռներդ ծալես, քեզ ով էր ասում յոյսդ ուրիշի վրայ դնես։

Խաչիկին այսպէս խօսելիս տեսնողը կըկարծէր, թէ նա անկարեկից էր դէպի ժողովուրդը։ Ոչ, նա շատ աւելի էր մղկրտում հայ գաւառների աւերմունքը լսելիս, բայց... ձեռովը աւելի բան չէր գալիս։ Հազիւ կարողանում էր իւր Թոռնեւանը ազատ և անվրտանգ պահել յարձակումներից։ Եւ այդ պարտական էր ոչ թէ յունաց խնամակալութեան, այլ իւր անունին, վաղեմի քա-

ջագործութիւններին։ Այժմ նա զառամեալ ծերունի էր, եօթանասուն տարեկան։ Նախկին վիթխարի հասակը, որ մամռոտած կաղնու բնի նմանութիւն ունէր, այժմ արևակէզ հասկի պէս կծռելու վրայ էր։

Հասանի և Ճնճղուկի հեռանալը շատ խոր էին ազդել Սուրբ իշխանի վրայ։ Վեց-եօթ տարի էր, որդիքը պանդխտութեան մէջ էին և դեռ վերադառնալու մի լուր չկար։ Ամեն անգամ իւր կորիճներին մտաբերելով հառաչում էր դառնապէս.

—Ա՜խ, անհնազանդ որդիք, ուր էք։ Դեռ խելքի չեկա՞ք, որ ձեզ պատուի համար չտարան, այլ պատուաւոր աքսորի։ Չէ՞ որ կուսակալի պաշտօնով էիք դառնալու հայրենիք. ուր էք, տըխմարներ...

Անթիւ վշտերի դէմ Խաչիկը մի անուշ սփոփանք ունէր, որով նրա սիրտը մխիթարւում, բացւում էր։ Հասանի ու Ճնճղուկի բացակայութեան միջոցին իւր ձեռի մէջ մի ծաղիկ ունէր, որից նա կարողանում էր ստանալ իւր սրտի ուզած ամեն հոտ ու կարօտ։

Դա իւր ծերութեան նեցուկ—վերջին կորիւնն էր, մի կայտառ, մի սիրուն տղայ։ Հասակով ընդամենը տասնուվեց տարեկան, բայց ուժով ու խելքով մի հասուն տղամարդ։

Իշխանիկ էր անունը, հօր աչքի լոյսը, կոտրած սրտի միակ յոյսը։

Թէկուզ մի օր, մի հատիկ օր նրան չտեսած՝ թէկուզ իւր կեանքը մարած, միևնոյն էր Խաչիկի համար։

Փոքրուց հոր ծնկի վրայ էր մեծացել Իշխանիկը։ Իւր սուր դատողութիւնով և խելացիութիւնով ամենի զարմանքը բերում էր. դրա պատճառն այն էր, որ Խաչիկ Արծրունու պէս փորձառու և հմուտ դաստիարակ էր ունեցել, նրա բերանից լսել ու սովորել իւր պապերի քաջագործութիւնները, չհասկացած բանի համար հարցեր տուել, հետը վէճի բռնուել, թնդուել ինքը, թնդացրել հօրը։

Պատանի Իշխանիկը ոչ միայն տղամարդի պէս տեսօք էր, այլ և իւր պարթև հասակի հետ կորուկ ու սրտուկ էր։ Հօր կրթելու շնորքն էր այդ, որ տխուր ժամանակ՝ էլ ոչ ձիւն էր հարցնում, ոչ անձրև, ոչ ցուրտ, ոչ տաք. թէ լոյս արևով, թէ մութ գիշերով Իշխանիկին հետը ձի նստացրած շրջեցնում էր Թոռնևանի բոլոր մասերը, որ իւր սիրեկան որդուն անծանօթ չմնայ իւր աշխարհի ոչ թէ սարն ու ձորը, որ ահագին բաներ են, այլ և ամեն մի առուն, ամեն մի քարը։

—Տես, որդի, ճանաչիր աշխարհդ, որ ուր էլ գնաս, քո հողն ու ջուրը չմոռանաս։ Ով ուզում է իւր աշխարհը սիրի, պէտք է նրան ճանաչի։

Այսպէս էր խրատում Առիւծ Խաչիկը իւր կորիւնին։

Տարիներով Խաչիկի նետերը կրմնային կապարճում թափուած, վաստակն էլ անկոփ ու անգործ, եթէ Իշխանիկը չլինէր, հօրը հասնդ չըներ-շընչէր զէնքերը շարժելու, ժանգերը սրբելու, իւր հետ զբօսանքի կամ որսի գնալու, որպէս զի ինքը վարժուի զէնք ու սուր շարժելում։

Մենակ այդ չէ։

Իշխանիկը կռիւների, թեթև արշաւանքների էլ մասնակցում էր, երբ Թոռնևանցիք մղում էին հարևան քիւրդ ցեղերի դէմ։ Ձի նստելում, սուր բանեցնելում նրա նմանը չափահասների մէջ չըկար. եփուած տղամարդի պէս նրա աչքերը վարժ էին թէ թրաշողումին, թէ նետաշարժումին։

Թոռնևանի զօրագունդը Հասանի և Ճնճղուկի հետ Վասպուրականից դուրս էր։ Երկրում յոյն սահմանապահ զօրք կամ լինում էր կամ չէ։ Թաթարների և միւս նետողների արշաւանքների դէմ պաշտպանուելու համար զօրք էր հարկաւոր։ Հայ գաւառներում մտածում էին կազմել, բայց խնամակալ կայսրը իրաւունք չէր տալիս, երկիւղ կրելով հայերի ապստամբութիւնից։

Խաչիկի հառաչելու և նենգաւոր յոյներից զանգատաւոր լինելու պատճառն հէնց այն էր, թէ ինչու չեն թողում, որ իւր ժողովրդից նոր զօրագունդ կազմի երկրի ապահովութեան համար։ Ինքը մանկութիւնից կռուի, արիւնհեղութեան սովոր,—այժմ հարկադրուած է տարիներով լռիկ նստել։ Ի՛նչ անենք որ ծերացած էր, բայց առիւծի նշանները դեռ չէին անհետացել։

Հ.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Ս.Ֆ.Հ. Публичная Библиотека
7/XI—1922

Սիրան առողջ և կռուի ծարաւ էր. միայն երբ որ իւր շուրջն աչք էր ածում ու մի հատ զինուոր չէր տեսնում, մնում էր տեղը կոթնած մնչալիս։

Դ.

Սենեքերիմ թագաւորի հետ Սեբաստիա գաղթեցին բազմաթիւ հոգևորականներ. որը յօժարակամ, որն ակամայ։ Բնիկ երկրում մնացող ժողովրդին մխիթարելու համար մնացին քիչ թուով երէցներ։ Հոգևորականների մեծ մասը վանականներ էին, այն էլ վախից վանքերում փակուած։ Այն հոգևորականները, որոնք գաղթականութեան հակառակն էին քարոզում, բոլորն էլ հալածուեցին անողոք կերպով։

Մխիթար երէցը ոչ միայն բանադրուեց Եղիշէ արքեպիսկոպոսից, այլ և շէնում ապրելու իրաւունք չունէր։ Այդ կարգադրութիւնը յայտնուած էր յոյն կուսակալներին, որոնք հսկում և տեղեկութիւններ էին ժողովում Մխիթար երէցի մասին։

Այդ առաքինի քահանայի յանցանքն այն էր, որ իւր ճարտար լեզուով ժողովրդին համոզում էր իրանց երկիրը չթողնել, ուրիշին յոյս չկապել։ Անդադար մի գաւառից միւս գաւառն էր շրջում գաւազանը ձեռին՝ մեծ մասամբ գիշերները, որ ապահով մնայ իրան հալածողներից։ Ժողովուրդը նրան ամեն տեղ ցնծութեամբ էր ընդունում. հիւանդներին ամոքում էր, տառապեալներին մխիթարում, վախկոտներին հայրաբար յանդիմանում, խրախուսում։

Նա վաղուց զրկուել էր ընտանիքից. հալածասէրների երեսից նրա կինն ու որդիքը արդէն փոխուել էին հանդերձեալ աշխարհը։ Նա մի ընտանիք կորցնելով ամբողջ Վասպուրականի հայ ընտանիքների հայր էր դարձել։ Ո՞ր կին նրան տեսնելիս իւր տունը չէր հշուիրում, գլուխն ու ոտները լուանում, որ ճանապարհի փոշուց մաքրուի. ո՞ր պատանին կամ աղջիկը նրան տեսնելիս՝ «Տէր հայր» չէր կանչում, ոտն ու ձեռը համբուրում։

Աստանդական կեանքով Մխիթար երէցը քանի տարի անց էր կացրել։ Քաշած զրկանքներն աչքը չէին գալիս. գոհ էր նա, որ իւր հօտը մխիթարուած է իրանով։ Նրա յորդորներով թաթարի ու պարսկի դէմ պաշտպանուելու համար, այս ու այն գաւառում յոյներից ծածուկ խմբեր էին կազմել ոչ թէ երիտասարդները, այլ և հովիւ ու գառնարած աղջիկները։

Բայց ծերութիւնն իրանն անելով Տէր Մխիթարին զառամեցրել էր։ Գլուխը հանգստացնելու համար նա մի խաղաղ անկիւն էր փընտրում։ Այդ խաղաղ անկիւնը նրան սիրով առաջարկեց վըշտակոծ Խաչիկը, Արծրունի առիւծ իշխանը, որ նոյնպէս զառամել, դառն մտածմունքներով պաշտպանուել, մի սփոփողի էր կարօտ։ Մխիթար ե-

ըէցը իւր ուզած մարդն էր, որին նա սիրում ու պաշտում էր հոգու պէս։

Երկուսն էլ իրանց կեանքի մայր մուտին մոտեցած, հայրենիքի ազատութեան համար այնքան տառապանքներ կրած, միևնոյն սրբազան մտքերով տոգորուած նստում էին Նկան բերդի աւագ աշտարակի առաջ, մի արևկող տեղ ու անցկացած դէպքերը փորփորում, յիշատակում։

Նրանց խօսակցութիւններին երբեմն ներկայ էին լինում բերդն եկող ժողովրդականք, բայց մշտական ունկնդիրը և խօսք ու զրոյցին մասնակցողը ծաղկահասակ, ուշիմ Իշխանիկն էր, որի գլխին Մխիթար Երէցի ասելով, կապուած էր Վասպուրականի փառքը։

Մի անգամ Տէր Մխիթարը Խաչիկին պատմում էր.

—Ի՛շխան, քո կեանքը և արած քաջութիւնները զարմանալի են, բայց արդեօք գիտե՞ս թէ ուրիշ ինչ զարմանալի իշխան է ունեցել մեր ազգը։ Քո անունը Խաչիկ է, նրա անունը Վահան է եղել, քո մականունը Առիւծ է, նրա մականունը Գայլ է եղել։ Բայց մի բանով նա առաւել էր։

—Ինչով, տէր հայր, պատմիր լսեմ, հետաքրքրութիւնով հարցրեց Խաչիկը.

—Նրանով, Իշխան, որ դու եօթանասունից մի երկու տարի անց՝ արդէն կոտրուել ես, բայց Գայլ Վահանը 88 տարեկան հասակում այնպէս առոյգ էր և եռանդոտ, որ երբ չար Միհրանը

պարսից Խոսրովի խօսքով եկել էր Տարօնը կործանելու, նա մի քանի հարիւր մարդով դուրս եկաւ 30.000-ի դէմ, թշնամիներից 3000 հոգի կոտորեց, Միհրանին էլ հետը. մնացածներին ցաք ու ցրիւ անելով սար ու ձոր գցեց։

—Ա՛հ, տէրտէր ջան, ուրախ բացականչեց Իշխանիկը, ինչ կարուկ մարդ է եղել այդ ծերունին։ Ես այնպէս գիտէի, թէ մենակ իմ հայրն է քաջ ծերութեան ժամանակ։ Սրտով կուզէի Գայլ Վահանը հիմի լինէր, ձեռը համբուրէի, որ նրա պէս շատ ծերանայի ու միշտ էլ քաջ մնայի։

—Հա՛յր, այն օրն ասում էիր թէ՝ Արծրունիներից մխիթարական բան չկայ, հապա Գայլ Վահանն ի՞նչ է։

—Է՛, սիրուն Իշխանիկ, վրայ բերեց Մխիթար Երէցը. դժուար է Արծրունիների մէջ Գայլ Վահան գտնել... Նա Արծրունի չէր. Մամիկոնեան ցեղից էր, որոնք մեծ ու փոքրով քաջ ու հաւատարիմ զաւակներ են հանդիսացել հայրենիքին։ Դալա՞ր մնան Տայոց աշխարհի սարերն ու ծմակները։

Նոյն ցեղից էր և Տիրանը, որ հագարացի Աբդուրահմանի դէմ դուրս եկաւ 8000 զօրքով այնպիսի դժուար ժամանակ, երբ միւս հայ իշխանները գլուխները վանդից ազատ պահելու համար ապահով անկիւն էին պտտում։ Ոչ ով չէր ուզում գլուխը հանել թագստի տեղից, ինչ թէ օգնել, աջակցել։

Յանկարծ նրան ընկերանալ ցանկացաւ Սահու

աշխատել, ճգնել են անդադար նրան մաշը գցել։

Երբ մի հայ իշխան առաքինի է եղել և աղի պէս քաղցր, իսկոյն նենդամիտները ծով են պատրաստել, որ նրան մէջը հալեն, հեռքը կորցնեն։ Եթէ գայլ է եղել, շներ են դարձել և վրան յարձակուել. եթէ առիւծ է եղել, իսկոյն ծածուկ որոգայթ են սարել ու մէջը բռնել։

—Ճիշտ է, տէր հայր, քո ասածին ես հակառակ չեմ։ Մի բան էլ դեռ աւելացնում եմ, որ երբ հայ թագաւորն ու հայ իշխանները միաբան են եղել, երբէք մեր աշխարհը նեղ օր չի տեսել։ Բայց երբ մէկը աջ է ձգել, միւսը ձախ, դրանից օգուտ են քաղել դրսի թշնամիները և սուտ բարեկամութիւնով մեր երկրին տիրել։

Յիշում եմ Կարսի Աբբաս թագաւորին և Գէորգ Մարզպետունի զօրավարին. ինչպէս յաղթեցին Աբխազաց գոռոզ թագաւորին։ Իշխանիկն այս պատմութիւնը չի լսել, թող կարճ պատմեմ իմանայ։ Աբխազ թագաւորը լսել էր, որ Կարսում մեծ հոյակապ եկեղեցի են շինում։ Սա պարծենում է, թէ պէտք է գնամ Կարսն առնեմ և եկեղեցին մեր հաւատի ծէսով օծել տամ։ Բայց մոռացել էր մի բան, որ երբ հայ թագաւորն ու նախարար զօրավարը միաբան են, սարը չի դիմանալ նրանց առաջ, ինչ թէ մի մեծամիտ թագաւոր։ Աբխազաց թագաւորը պատերազմում գերուեց և կենդանի բերուեց Կարս։ Աբբասը նրա կուռը բռնած տարաւ նորաշէն եկեղեցու բո-

լոր գեղեցկութիւնները ցոյց տուեց ու վերջը հարցրեց.

—Տեսա՞ր։

—Տեսայ, պատասխանեց Աբխազ թագաւորը։

—Այդ քեզ բաւական էր։ Դէ՛, հանեցէք սրա աչքերը, հրամայեց դահիճներին Աբբասը։

—Ուհ, ինչ կորուկ մարդ է եղել Աբբասը, հաւանութիւն տուեց Իշխանիկը։ Հապա այդպէս չէ՞ր կարող լինի Սենեքերիմը, հայր, որի անունը յիշելիս հառաչում ես ու վշտանում։ Բայց մի կարգին չըպատմեցիր այդ ազգակից թագաւորի մասին, թէ ի՞նչ է արել, որը յիշելիս գլխիդ ցաւը բռնում է։

—Դա սիրտ չունի, սիրելի Իշխանիկ, որ քեզ Արծրունեաց մասին պատմի, խօսեց Տէր Մխիթարը, ես կասեմ աչքովս տեսածը, լսիր։ Ուղիղ որ Սենեքերիմը անշնորքի մէկն էր. փոխանակ թաթարների դէմ կռուելով իւր աշխարհը պաշտպանելու, սրտապատառ դիմեց յոյներին.

—Ես անկարող եմ իմ աշխարհը պահպանելու, ասեց, եթէ կը յօժարուէք թաթարների դէմ կռուելու, ահա տալիս եմ ձեզ ողջ աշխարհս, միայն աղաչում եմ մի հանգիստ անկիւն տուէք, որ ժողովրդիս հետ կեանքիս վերջին օրերը անցկացնեմ ու խաղաղ մեռնեմ։

Ե.

Այս խօսքերի վրայ Խաչիկը խոր թառանչ

քաշեց. կրծքի տակը այրում էր կարծես։ Բթամատակերից վնչալով ամպի պէս ծուխ ու մուխ հանելով վեր բարձրացրեց։

—Ե՞րբ, ինչպէս պատահեց, տէր հայր, մանրամասն ասա, թախանձեց Իշխանիկը։

—Այդ պատահմունքը վաղուց չէ, քսան տարի հազիւ կայ։ Այն ժամանակ դու ծնուած չէիր։ Սենեքերիմ թագաւորը, որ վախկոտ ու ալարկոտ ծեր էր, վճռեց իւր աշխարհը տալ յոյներին և նրա տէրութեան մէջ հող վերցնել. այնտեղ փոխադրել իւր արքունիքը, զօրքն ու ժողովրդի մի մասը։

Այդ պայմանը կռելու համար իւր որդի Դաւթին Կ. Պոլիս ուղարկեց. նրա հետ չորս հարիւր ազնուականներ, հազար ձիաւոր, իւր երկրի Եղիշէ արքեպիսկոպոսը, երեք հարիւր Ջորու բեռն էլ ընծաներ։ Վասիլ կայսրը ուրախութիւնով ընդունեց այդ ձեռնտու առաջարկը, և փոխանակութեան դաշնագիրը կնքեց։

1021 թ. դաշնագրի կնքելուց մի տարի ետը Սենեքերիմը իւր ընտանիքով, անթիւ իշխաններով, պաշտօնեաներով, տասնչորս հազար հեծելազօրքով, սրանց հետ մարդ, կին, մեծ, փոքր, մօտ հարիւր հազարի չափ ժողովուրդ թողին հին հայրենիքը, մեր անուշ հողն ու ջուրը և գնացին օտար հողի վրայ նոր հայրենիք շինելու։

Դու փոքր ես, ինչ կը հասկանաս, բայց անկարելի էր հայ ժողովրդին դաղթելիս տեսնել

ու լաց չլինել։ Թողում էին իրանց դաշտերն ու լեռները, եկեղեցիներն ու սիրելիների գերեզմանները. յաւիտեան մնաս բարով էին ասում այն բոլորին, որ հայրենիք, նախնեաց երկիր էր կոչում։ Անտէր մնաց Ոստանայ արքունիքը, Աղթամարայ դղեակը, Վանայ բերդը, Վարագայ վանքը։

Սենեքերիմը իւր աշխարհի հետ յոյներին տուեց տասը շէն քաղաքներ, չորս հազար չորս հարիւր ընդարձակ գիւղեր, եօթանասուն բերդ։

Սենեքերիմը օտարութիւն գնաց և ողջ աշխարհը իւր ետևից կործանեց։ Վասպուրականի ինչն ես հարցնում, որդի, նա մի զոհար էր, բայց տխմար ձեռը գլորեց ծովի խորքը։ Վերջը շատ էլ փնդռեն—գիւրին չէ գտնելը։

—Է՜հ, տէր հայր, երանի թէ մեր ազգի դժբաղդութիւնը դրանով վերջանար, վրայ բերեց ծերունի Խաչիկը, և վատանունը միայն Արծրունի թագաւորը լինէր։ Բայց ո՞ւր թողնեք Յովհաննէս Սմբատին, որ Շահնշահ մականունն էլ զուր շալակած մարդ էր ածում։ Մեր ո՞ր թագաւորն է կարողացել յոյների ծուղակից ազատ մնալ, որ Յովհաննէսի պէս վախկոտը, ապաշնորհը մնար։ Սենեքերիմից ետ երեք տարի էլ չանցաւ, Վասիլ կայսրը Հայաստանի ափով անցնելիս՝ Յովհաննէս թագաւորը Պետրոս կաթողիկոսին նրա առաջն ուղարկեց թանկագին ընծաներով և գաղտնի կտակ շինել տուեց, որի մէջ խոստանում էր, թէ իւր մահից ետ Անի մայրաքաղաքը շրջակայքով պատ-

կանելու է յոյներին։ Սրտապատառ թագաւորը այդ բանն անում էր նրա համար, որ Տուղրիլ բէկի յարձակմունքներից իւր երկիրն անփորձ և անվնաս պահի Վասիլ կայսեր միջոցով։

Իշխանիկը գլուխը բարձրացնելով հարցրեց.

—Հայր իմ, հապա մի ժամանակ ասում էիր, որ Վասակ սպարապետը հայ զօրքերով զարմանալի քաջութիւններ է արել ու ինքն էլ քաջի նման կռուի դաշտում մեռել։ Այդ Յովհաննէս թագաւորի ժամանակը չէ՞ր։

—Ճշմարիտ է, որդի, կռուել է մենակ սպարապետը առանց թագաւորի։ Իսկ ես փոքր առաջ ասեցի, որ հայ աշխարհն ու զօրքը այն ժամանակն են անառիկ, երբ նախարարն ու թագաւորը միաբան են։ Եթէ Վասակ սպարապետը Յովհաննէսի պէս վախկոտ թագաւոր չունենար, թաթարներին այնպէս նեղը կլծէր, որ եկած ճանապարհները կըմոլորէին։

—Եւ տուել է Անի քաղաքը, հայր. անդարձ է տուել։

—Տուել է, զաւակս, և միայն լոկ խօսքով չի տուել։ Ինչպէս ասի, մեր կաթողիկոսի ձեռով է կնքուել դաշն ու կտակը։ Բայց մեր աշխարհի վիճակը նրանից ետ ինքն իրան խաղաղուել է. Տուղրիլ բէկը և թաթարները մեր երկիրը ամենևին ոտք չեն դրել... յոյները մեզ մի մազաչափ երախտիք չեն արել այդ ժամանակ... բայց...

—Ի՞նչ «բայց», հայր իմ. մի՛ ծածկիլ, մինչև վերջն ասա։

—Ի՞նչ ասեմ. եթէ Յովհաննէսը վախկոտի մէկն էր, Պետրոս կաթողիկոսն էլ պակաս փառասէրը չէր։

—Յետոյ ի՞նչ։

—Ի՞նչ ես ուզում, որ լինի, որդի։

—Յետոյ ի՞նչ եղաւ, ասա, ինչո՞ւ ես լռում։

—Ի՞նչ ասեմ որ սիրտդ չցաւի։ Ինչքան որ Մխիթար երէցը սիրելի է քեզ, այնքան էլ մի անպիտան Կիրակոս երէց մեր աշխարհը պատուհասի մէկ զցեց ու թողեց...

—Ի՞նչպէս, հայր իմ, մի երէցի ձեռով ի՞նչ պատուհաս կըգար։

—Ա՛յ թէ ինչպէս։ Յունաց Կոստանդին կայսրը, որ հոգուց մօտիկ մի խղճով մարդ էր, իմանալով որ հայերին խոստացուած օգնութիւնը չի հասել, անարդարութիւն համարեց Անին հայերից առնելը։ Հոգևարք ժամանակ կանչեց Կիրակոս քահանային. իբրև հոգևորականի հաւատաց ու յանձնեց Պետրոս կաթողիկոսի ձեռով կնքած կըտակը, որ բերի հայերին տայ։ Բայց նա ագահութիւնից կուրացած այդ թուղթը պահեց, մինչև բարեսիրտ կայսեր տեղ նստեց չարանենգ Միքայելը։ Տարաւ դրան տուեց և փոխարէնը ոսկիներ ստացաւ։

—Յետո՞յ, հայր իմ, սրտատրոփ հարցրեց Իշխանիկը։

—Յետոյ այն է, որ այդ թղթի զօրութիւնով յոյները պահանջում են մեր գեղեցիկ Անին։

—Հիմի՞։

—Այո՛ հիմի։ Բայց հայերը չեն տալիս. դրանց գլխաւորն է Վահրամ Պահլաւունի սպարապետը, որ հոգեհանի պէս տանջում է յոյն զօրքերին և չի թողում որ Անուն մօտենան։ Անին փոքր, անշնան քաղաք չիմանաս, ո՛րդի. նա մեծաշէն, բազմագանձ, մարդաշատ բան է, հազար ու մի եկեղեցի ունի։ Վատասիրտ Միքայելը ատամները սրել է աննման Անին խլելու համար. հայերը չեն տալիս։

—Եւ շատ էլ լաւ են անում, հայր, ինչո՞ւ տան, վրայ բերեց Իշխանիկը։

—Ասում են, ձեր թագաւորը խոստացել է։

—Սխալւում են այդպէս ասելով։ Թագաւորն ի՞նչ իրաւունք ունէր մէկին բախշելու այն, ինչ որ իրանը չէր։ Անին ազգինն է, թագաւորինը չէ։ Թագաւորը խոստացել է ու մեռել, թող գընան նրանցից պահանջեն։

—Քու խելքին որ լսեն, լաւ կըլինի, բայց չեն անում։ Տեսնելով որ հայերը առանց իրանց կամքը հարցնելու ժողովուեցին ու Անու մէջ Աշոտի որդի Գագիկին թագաւոր ընտրեցին, յոյները զայրացել, կատաղել են։ Հարիւր հազարներով նրանք զօրքեր են ուղարկել, որ պաշարեն, և ուժով առնեն Անին։ Բայց դէ, կարելի բա՞ն է, որ նախարարն ու թագաւորը միաբան եղած ժամանակ հային կարողանան յաղթել կամ մէջքը ծռել։

Յոյները յարձակուելով միշտ ջարդուել են հայերից և փոշմանած ետ դարձել։ Վերջը խորամանկ միջոցներով որսացել են վեստ Սարգսին, անթիւ զօրք տուել նրա ձեռը, որ Շիրակ մտնի և Անին առնի։

Վեստ Սարգիսը Աշոտի ժամանակ արքայական գանձերի հոգաբարձու էր։ Նրա արարմունքը Վահրամին վիշտ ու մտածմունք էր պատճառել։ Արծուի նման քիթը քաշ էր արել երկրի ծանր վիճակի վրայ մտածում։

Այդ ժամանակ անվախ, ազատասէր հայերը ժողովուել են Ծերունի Վահրամի շուրջը և միաբերան խնդրել։

—Հայր Վահրամ, վերկաց և մեզ պատերազմ տար։ Կամ մեզ մեր թագաւորաշէն պարիսպների տակ մեռցրու կամ վեստ իշխանին մեր աչքի առաջ սատկացրու։ Մենք բաց աչքով Անին յոյներին տուողը չենք։

Ծերունի զօրապետն այս խօսքերով ոգևորուած անցել է քաջերի գլուխը և վեստ Սարգսի վրայ յարձակուելով այնպիսի կոտորած է տուել յոյներին, որ կացնի բերանից թռած տաշեղների պէս փախել ցրուել են Ախուրեանի ձորերն ու ծերպերը։ Մի մասը սրից է ջարդուել, միւս մասից շատը ջրում խեղդուել։ Յոյները հայ զօրքի ահարկու աղաղակներից այնպէս են ապուշ կորու-

ել, յիմարացել, որ ճարահատեալ աղերսել են հայերին, մի քիչ գութ ունենան, ամենին սրի բերան չըտան։ Վահրամը հրամայել է իւր զօրականներին մեղմացնել ջարդը։ Դրանով ազատուել են հարիւրի չափ յոյն զինուորներ և փախել իրանց աշխարհը։

Եթէ Վահրամը ծերունի տեղով այդպէս կոտորածներ անէր, ի՞նչ կըլինէր քաջ պատանի Թագաւորը, որ տղամարդու ամեն արժանաւորութիւններն ունի. մի գեղեցիկ, բարեպաշտ, վեհանձն, զօրեղ, զգաստ, առաքինի անձն է։ Դեռ հերու էր, որ արիասիրտ մարդկանց գլուխն անցնելով յարձակուել էր ուխտադրուժ Սարգսի վրայ, կալանաւորել Անու մէջ, որ դադարի յոյներին գործակից լինելուց։

Յոյներին ջարդելուց վերջը լսել էր, որ Թաթարներն անհամար բազմութիւնով լցուել են Նիգ գաւառը և կամենում են Գրիգոր մագիստրոսին Բջնի բերդում պաշարել։ Գագիկը շանթի պէս հասել է Հրազդանի մօտ, առաջները կտրել, իրար գլխի ածելով ոտնատակել, ցաք ու ցրիւ տուել և մեծ աւարով դարձել Անի մայրաքաղաքը։

Պատանի Թագաւորի քաջագործութիւններից Իշխանիկի հոգին ցնծում էր։ Դարձաւ հօրն ուրախագէմ հարցրեց.

—Հայր, այդ Թագաւորը մխիթարուած կը մնա՞յ Իշխանների կողմից, Թէ ուրիշ Սահուններ, Վեստեր դուրս կը գան, որ դաւաճանեն նրան ու

ու վերջը Թշնամիների բերանում Թողնեն։

—Այն կողմից եկողները հաստատ ոչինչ չեն ասում, բայց Թւում է որ մի քանի փառամոլ ու Թանձրամիտ իշխաններ չեն դիմանալու. յոյների նենգաւոր խոստումներից խաբուելու են։

—Մե՛հ, այդ ի՞նչ ես ասում, հայր, շանթահարուածի պէս գոչեց Իշխանիկը։ Ուրեմն Գագիկին կը գլորե՞ն... փոխանակ սիրելու, օգնելու, որ վախկոտ Յովհաննէսի կորցրածը ետ է խլում։ Վա՛յ, վա՛յ, վա՛յ.....։ Ո՞ւր էր Թէ մինն էլ լինէր, տխմար Սենեքերիմի կորցրածը ետ առնէր... Չէ՞ որ, դու մի անգամ ասիր, Թէ շնորհալի Թագաւորներին ազգն է ընտրում. Գագիկն էլ դրանցից մինն է։ Ո՞վքեր են այն վատ հոգիքը, որ ազգի ընտրեալի վրայ խէթ աչքով են նայում....։ Այդպիսիներին բնաջինջ անելու համար մենակ ես բաւական եմ։

Խաչիկը անհուն զորովով որդուն մօտ քաշելով սիրուն գլուխը գրկեց, երեսն ու ճակատը համբուրեց։ Աչքերից արտասունք Թափելով՝ հետն էլ մեղմ շշնջաց.

—Հասակի՞դ ու արևի՞դ մեռնի Խուլ Խաչիկը։ Ի՞նչ կը լինէր, Աստուած կեանքիս մնացած օրերը խլէր, քեզ բաշխէր. դու մեծանա՛յիր, սրտիդ փափագները տեղաց անէիր. այ իմ քաջ կորիւն, այ իմ փլուած սրտի սիւն։

(Բոնդասվաշ) Կոմիտաս
Ցամաքս ղողդիգոփ 3
Ցամաքս վրսեռ

Զ.

Մխիթար երէցը Իշխանիկով հիացած էր։ Տեսնելով նրա հետաքրքրութիւնը՝ ժամերով մօտը նստեցնում, ասում-խօսում էր։ Աշխիկի թողած պակասորդը նա էր լրացնում։ Իշխանիկը մինչև անգամ գրաճանաչ էր դարձել Տէր Մխիթարի մօտ գնալ գալուց. երբեմն մագաղաթի կտորները աչքին բռնում էր ու հեգելով կամաց կամաց կարդում։

Մի անգամ Մխիթար երէցը Իշխանիկի աներկիւղութեան ու խելօք զրոյցների վրայ զարմանալով մօտ կանչեց, ճակատը համբուրեց ու ասեց.

—Երանի՛ քեզ պէս մի քանիսը ունենար Վասպուրականը։

Յետոյ հառաչելով աւելացրեց.

—Ո՜հ, որքան սակաւ են այժմ ազատասէր հոգիներ մեր աշխարհում։ Յոգնեցի քարոզելուց, իմ սրտի ուզած անվախ, անահ աղջիկ ու տղայ չը գտայ, ամենն էլ սրտամեռ, վախկոտ են դարձել։ Երկու հոգի միայն կան Հայկ նահապետի արժանաւոր զաւակներ, մինը տղայ, միւսն աղջիկ։ Նրանք էլ դեռ փոքր են։

—Տէ՛ր հայր, ժպտալով խօսեց Իշխանիկը, ես ճանաչում եմ ում որ ասում ես։ Տղի անունը չեմ ասիլ, բայց աղջիկը Բիւրեղիկն է։ Ի՛նձ ես գովում թէ քաջ եմ։ Ես ի՞նչ եմ նրա մօտ։ Տեսել ե՞ս, տէ՛ր հայր, երբ գառնարած աղջկերանց

հետ միասին կռիւ է դուրս գալիս քիւրդ հովիւների դէմ։ Նրան պէտք է տեսնել մահակը ձեռին ծվալիս, նրանց վրայ յարձակուելիս, որ զարմանաս։ Թէպէտ մեր հովուի աղջիկն է, բայց քսան իշխանուհի արժի։ Նա ո՞րտեղից է լսել մեր աշխարհի հին-հին բաները, որ ընկեր աղջիկներին էլ աղբիւրների գլխին նստած ժամանակ պատմում է։

—Ապրի Բիւրեղիկս, խօսեց Տէր Մխիթարը, շատ լաւ է անում։ Հապա՛, ես նրան սովրեցրել եմ, որ նա էլ ուրիշներին պատմի։

—Տէ՛ր հայր, գիտե՞ս ինչ։ Մի օր գնացել էի դաշտը մեր ոչխարներին նայելու։ Դեռ հեռու էի, Բիւրեղիկին նկատեցի. տրեխները ոտին, մահակը կռան տակ, կանաչ թմբի վրայ կանգնած մի բան էր գործում։ Տէ՛ր հայր, քեզ ուղիղ խոստովանեմ, այդ աղջիկն ինձ վաղուց դուր է գալիս. համ սիրուն է, համ սրտոտ։ Սիպտակ քուռակս քշելով հասայ նրա թմբին ու հարցրի կատակով.

—Ի՞նչ ես գործում, Բիւրեղիկ, ո՞վ գիտէ պաճիճ ես գործում նշանածիդ համար։

Բիւրեղիկը քիչ կարմրեց ու համարձակ պատասխանեց հեգնական կերպով.

—Հիմիկուան տղէքը իրանց հարսնացուներից պաճիճ ու հէսկի կը պահանջեն, որ զարդարուեն ու նախշուն ոտներով զուարճանան, բա՞ս հօ ուրիշ աւելի հարկաւոր բանի վրայ չէ՞ն մտածիլ։ Նրանց շատ հոգն է՞, որ մտածեն, թէ մեր

աշխարհը թաթարների, արաբների ձեռից ինչ
րի մէջ է։ Արդեօք տղաների քունը ինչպէս
տանում, որ մտածում են թէ իրանց աշխար
յոյների ձեռին գրաւ է։

Մտենալով նայում եմ, տեսնում—ինչ. Բիւ
բեղիկը ոչ թէ պաճիճ է գործում, այլ պարսուս
տէր հայր, պարսուտ։ Զարմանալով հարցնում ե

—Ի՞նչի համար է, ո՞վ պէտք է գործ ած
այդ։

Նա պատասխանում է.

—Զարմանալի է այժմեան տղերանց խելքը
ոնց թէ ինչու համար է։ Պարսուտ է, մեր պա
պերի զէնքերից մինը, չես հասկանում։ Շինու
եմ, որ քիւրդ հովիւների դէմ գործ ածեմ։ Նեա
հատած միջոցին պարսուտը տղամարդկանց հա
մար էլ լաւ զէնք է։ Բայց որովհետև մեր պ
խարհի շփոթ ժամանակն է, ամեն կողմից յար
ձակւում են՝ թաթար, արաբ, յոյն. ամօթ չ
աղջկերանց էլ պարսուտ բանացնել ու նրանց
անները թշնամիներին հալածել։ Տղայ չեղած տե
ղը ես աղջիկ տեղովս մի տղայ արժեմ, վրայ բե
բեց Բիւրեղիկը կարմրելով։

—Տէ՛ր հայր, մեղքս ինչ ծածկեմ, այդ հա
մարձակ ու խելօք խօսքերը լսելուց ետ չհամբե
բեցի, իջայ ձիուց և Բիւրեղիկին սրտանց հա
բուրեցի։ Թէպէտ մեր ոչխարածի դուստրն է, բայ
անչափ մեծասիրտն է. եթէ սկզբից միտքս իմա
նար, չէր թողիլ որ մտենամ։ Կատակով ասի.

—Բիւրեղիկ, քեզ պէտք է ուզեմ։

Հովուի աղջիկը փոխանակ ուրախութիւնից
վեր թռչելու և ոտներովս փաթաթուելու, իսկի
նշանակութիւն էլ չը տուեց, թէ իւր տէր—իշ
խանի որդին եմ. հպարտ ու սիրուն պինչը վեր
քաշելով խօսեց։

—Հասանի ու Ճնճղուկի պէս մի ապերախտ
էլ դու պէտք է դուրս գաս վերջը. մեր աշխար
հը թողած գնաս ուրիշին ծառայես։ Մեր աշ
խարհի ջուրը քիչ համարելով գնում էք ուրիշ
մեծ ծովում լող սովորելու, բայց չէք իմանում
որ տակը պէտք է անէք ու կորչէք անհետ։

Շատ երդուեցի, որ հօրիցս հեռացողը չեմ.
նա չհաւատաց։

Հեռանալիս ուզեցի մէկ էլ համբուրեմ, յան
կարծ խաղաղ Բիւրեղիկը բարկութիւնից կարծես
կրակ կտրած, հերսոտ աչքերով նայեց վրէս ու
ասեց։

—Իշխանիկ, դեռ գնա տղամարդութիւնդ
ցոյց տուր, մի մեծ կռուի մէջ իշխանական ա
նունդ բարձրացրու, յետոյ արի աղջիկ համբու
բիր։ Դեռ իշխանիկ ես, մի համբոյրն էլ քեզ բա
ւական է. Աստուծով երբ իշխան կը դառնաս,
ինձնից լաւ շատ հարսնացու կը ճարես։ Երեխայ
ես, չես իմանում, որ զոյգ համբոյրը նշանի գը
րաւն է.

—Կեցցէ՛ Բիւրեղիկը, բացականչեց Տէր
Մխիթարը, շատ ճիշտ է ասել, ձեզ պէս յամառ

կորիւններին Բիւրեղիկի պէս աղջիկներ պէտք է պատահեն, որ ամաչեցնեն, խելքի բերեն։ Շատ ուղիղ է նկատել, քո եղբայրները ի՞նչ են գտել օտարութեան մէջ, որ վատ մուրացկանի պէս էլ իրանց սեպհական տունը չեն մտաբերում։ Մեր աշխարհի օդի ու ջրի պէս քաղցր, հողի ու երկնքի պէս անուշ, ծաղկի ու աղջկայ պէս գեղեցիկ ո՞ր աշխարհն ունի... բայց չէ՛, փառք մուրալը արիւն ու միս դարձած հայ շինականին էլ, իշխանին էլ քշում է դէպի պանդխտութիւն, դէպի տնաքանդութիւն։

Տէր Մխիթարի այս յանդիմանախառն խօսքերը աւելի ու աւելի էին բորբոքում Իշխանիկի սիրտը. նա գիշեր-ցերեկ պատերազմական յաղթութիւնների վրայ էր երազում ու մտածում։

Երբ հայրը մի անգամ հայրենիքի ամեն ցաւ ու կսկիծ սիրտն արած, Նկան բերդում նստած վրէժում էր ու ծերութեան վրայ դժգոհում, Իշխանիկը սանձակոծ մտրուկի պէս փարթամ մազերը թոթուելով եկաւ նրա առաջ ծունկ չոքեց և ասեց։

—Հայր իմ, ինչո՞ւ ես հառաչում, չէ՞ որ այժմ այլ ես փոքր չեմ։ Հասանի ու Ճնճղուկի պէս կարող եմ պատերազմում աջ թեւդ պահել։ Ասում են մեր Թոռնեանի սահմանների վրայ թաթարներ են երևում։ Տեսնողները պատմում են, որ նրանք շատ չեն. իրաւունք տուր մի խումբ երիտասարդներ վերցնեմ, նրանց վրայ յարձակուեմ։ Տես յաղթող կը դառնամ թէ ոչ։

—Ո՜հ, Իշխանիկս, մի՞թէ կասկածում էլ ես, որ պատերազմից յաղթող կը վերադառնաս։ Ամօթ չէ՞ կորիւնին՝ պատերազմ մտնի և պարտուած դուրս գայ։ Դու լսե՞լ ես, որ երբ և իցէ քո հայը Խաչիկը առանց յաղթանակի Նկան վերադառնայ։ Ո՜հ, զաւակս, տուիծի վրայ այդպէս մտածելը մեղք է։

Յետոյ սիրտը շահելու համար աւելացրեց։

—Միայն դու դեռ փոքր ես, համբերիր, Առիւծ դառնաս, յետոյ...

Իշխանը դեռ խօսքը չվերջացրած լռեց ու մտածմունքի ծոմն ընկաւ։

Ը.

Այդ միջոցներին լուր էր տարածուել, որ Միքայէլ կայսրը վախճանուել է։

Յոյն կուսակալը հեռացել էր. Վասպուրականը թափուր էր մնացել թէ կառավարչից և թէ զօրքից։ Թաթարները խումբ-խումբ ներս էին խուժում, դաշտերից ոչխար, արջառ քշում, տանում։ Ժողովուրդը հարստահարւում էր օրէցօր։

Այդ խմբերի մասին էր լսել քաջ Իշխանիկը, որոնք Վասպուրականի ամեն անկիւն կողոպտում, ապականում էին, բայց Թոռնեանին մօտենալ, Առիւծ Խաչիկի թարթափն ընկնել—երբէք չէին համարձակւում։

Անտէր մնացած հայ գաւառների աւարի, կո-

ղոպուտի համը դրանց առամի տակն էր մնացել։ Գայլագռաւների պէս Հայաստանի գլխով պտտելիս աչքները տնկել էին Այրարատի վրայ։ Այնտեղ թագաւորում էր երիտասարդ Գագիկը. այդ գիտէին թաթարները, բայց մարդահաշիւ չէին գցում նրան։ Անհամար բազմութիւնով առամները սրած թափուել էին Այրարատ աւերելու։ Խոհական քաջ Գագիկը յանկարծակի նրանց դէմ դուրս գալով բերաններին այնպէս էր խփել, որ ջարդուած, խայտառակուած հազիւ էին կարողացել շունչները վրէն փախչել ու պրծնել։

Ցաղթուած թաթարները զաղզաղած, կատաղած, Գագիկի առաջից հալածուած՝ փախել էին Կորդուաց աշխարհի կողմերը, որ թալանեն, կրակի բերան տան ամեն բան, ինչ որ հայինն է.

Այդպէս էլ արին։ Որքան ոյժ ունէին անգթութիւններ, սրածութիւններ անելու, չէին խնայում։ Բայց դրեթէ ամեն գիւղում, ամեն գաւառում հանդիպում էին խիստ դիմադրութեան հայ ժողովրդի կողմից։ Կանայք ու աղջկէրք անգամ անվեհեր կռւում էին իրանց ազգականների հետ և հարուածների տակ շունչները փչում։

Այդ տեսնելով թաթարները նոր ընկերներ ժողովեցին, բոլոր գաւառները ոտնատակ տուին։ Գիտէին որ յոյն կուսակալը գնացել է, չկայ. Հասանն ու Ճնճղուին էլ դեռ Կ. Պոլսից Վասպուրական չեն եկել. մտադրուեցին աւելի առաջ գնալ։

Եւ գնացին։

Հասել էին արդէն Թոռնևանի գիւղերին. առաջամ կանգ առան սարսափած։ Առիւծ Խաչիկի զարհուրելի անունն էր հնչում ամենի բերանից։ Թաթարներից ոմանք ասում էին.

—Երկրում զօրք չի երևում, մտնենք Թոռնևանն էլ կողոպտենք, առատ աւարն այստեղ է։

Ոմանք էլ ահ ու դողով պատասխանում էին.

—Ո՞ւր էք գնում, յիմարներ, սրան Առիւծ Խաչիկի որջ կասեն, քարի միջից էլ զօրք ու զինուոր դուրս կը թափուեն, եթէ Խուլ Խաչիկը սև ձիու վրայ ձեր առաջը դուրս գայ։

—Է՛հ, աւելորդ է մի մարդուց վախենալը, կրկնում էին իրար ետևից թաթարները, մանաւանդ որ ծերացել, ուժից ընկել է.

—Գագիկին պատանի ասելով մարդատեղ չը դրինք, գնացինք ու ջարդուեցինք, հիմի էլ Խաչիկին ծեր ասելով ուզում էք երկիրը մտնել։ Չէ, մենք համաձայն չենք, պնդում էին թաթարների մի մասը. թող իմանանք, գոնէ, թէ այժմ ո՞ւր է Խաչիկ իշխանը։ Դուք յոյս մի՛ դնէք նրա ծերութեան վրայ, առիւծն ինչքան ծերացած լինի, դարձեալ մնչալ ու ձէտով շրմփացնել գիտէ։

Այս վերջին խօսողները իրանց միջից ձիաւոր ուղարկեցին Թոռնևան, որ լրտեսի։ Ձիաւորը վերադարձաւ. նրա բերած տեղեկութեան վրայ մի վայրկեան էլ կանգ չառան թաթարները. բո-

լորն իրար եանից հեղեղի պէս թափուեցին Թոռնեանի սահմանի գիւղերի վրայ։

Ձիաւորը լուր էր բերել, որ Խուլ Խաչիկը իւր երկրից բացակայ է։

Բայց ուր էր առիւծը, որ իւր որջումը չէր։

Ը.

Միքայէլ կայսեր մահը Խաչիկը լսելով ուրախանալու պէս եղաւ. կասես մէկը նրա ականջն ի վեր ասելիս լինէր.

—Որդիքդ որտեղ որ է, կըգան։

Այդ յուսով ծերունին վրայ եկել, առուգացել էր։ Այս ու այն գաւառի աւերածի մասին լսելիս արիւնը հերսից, բարկութիւնից եռ էր գալիս սրտի մէջ։ Մղած պատերազմները վերանորոգւում էին աչքերի առաջ, ուր հազարաւոր թաթարներ ու այլազգիներ արիւնթաթախ, ճապաղած թափուած էին լինում։ Սպիների տեղերը քոր էին գալիս, կուրծք ու երակ նրան կռուի էին կանչում, յորդորում։

Ծերունի դիւցազը առժամ թողել էր Իշխանիկին Նկան բերդում, Մխիթար երէցի հետ ձի նստած գնացել էր Ճուաշ. յետոյ այնտեղից դէպի Նախջուանայ կողմը՝ ճնացեալ հայ իշխաններին խորհուրդ ու խրատներ տալու, որ միաբանուեն։ Հէնց այդտեղ էր, որ Խաչիկին լուր տուին, թէ թաթարները Թոռնեանի մէջն են։ Առիւծը, որ երբէք չէր վհատած վտանգների ու յարձակումների մասին լսելիս, այժմ դառնութեամբ ախ քաշեց.

—Թոռնեանին էլ հասան թաթարները. ուրեմն այլ ևս Խաչիկի անունը նրանց չի սարսափեցնում։ Ծերութիւն, ծերութիւն։ Բայց ուր էք, դուք, կորիչ որդիներս, գուցէ ձեր երիտասարդութիւնից պատկառեն թշնամիները և Թոռնեանը հանգիստ թողնեն։ Բաւական չեղաւ պանդխտութիւն քաշելը։ Ձեր բացակայութիւնից և իմ ծերութիւնից օգուտ քաղելով այլազգիք խուժել են հայրենի հողը, ուր էք Հասան, Ճնճղուկ։

Այս հառաչանքը Կ. Պոլսում նրանց ականջն էլ ընկնէր, ինչ օգուտ։ Մինչև նրանց հասնելը աշխարհը ձեռից կը գնար։

Այդ լաւ գիտէր Խաչիկը, առանց ժամանակ կորցնելու Մխիթար երէցի հետ սրարշաւ հասաւ Նկան։ Այդ վտանգը հեռացնելը իւր վերջին քաջութեան և պարտականութեան գործ համարելով, խնդրեց Տէր Մխիթարին, որ Իշխանիկի վրայ հսկի.

— Նայիր, տէր հայր, որ բերդի պարսպից ոտը դուրս չդնի, թէ չէ նրան սանձել անկարելի է։ Մեծ պատերազմ չի մտած, որ խոհեմ շարժուել կարենայ. եռանդն անհուն է և ինքն անփորձ. պատերազմի զոչիւն լսելիս խենթ մտրուկի պէս, առանց վտանգը կշռելու արիւնալից աչքերով գոռ տեղն է վազում։ Աղաչում եմ, հսկիր։ Եթէ ես պատերազմից ողջ չեմ վերադառնալ, այն

ժամանակ ամուր է իմ Նկան բերդը, որքան կարող էք ժողովուրդ ներս առէք ու պաշտպանուեցէք Իշխանիկիս հետ։

Կանչեց Իշխանիկին և յուզուած ձայնով խօսեց.

—Սիրասուն զաւակս. այսօր և վաղը իմ տեղ քո մեծաւորը կըլինի Մխիթար երէցը. քեզ նրան եմ յանձնում, քաջ իմանալով որ նրան սիրում ես։ Ինչ էլ որ ասի, պէտք է լսես։ Միջոց չկայ այս բոպէիս ամեն ինչ մանրամասն քեզ բացատրելու, արի, ճակատդ համբուրեմ ու ճանա բարով։

Իշխանիկը իւր հօրը երկար տարիներ այդպէս վրդովուած ու կորուկ խօսելիս չէր տեսել։ Սրտով ուզում էր խնդրել, որ իրան էլ հետը պատերազմ տանի, բայց վախեցաւ այդ զայրացած վայրկենին մերժումն ստանայ եթէ դիմի. հօր աչը համբուրեց լռիկ ու սփարթնած և արտասուելով քաշուեց աշտարակը։

Տէր Մխիթարը հետևեց նրան։

Իրիկնապահն էր։

Խաչիկն առանց բոպէ կորցնելու իւր ահեղ ձայնով բերդից իմացում տուեց ժողովրդին.

—Հապա թոռնանցիք, ո՞վ է պատրաստ ինձ հետևելու. սուր, նիզակ. թռէք, հասէք։

Ովքեր հեռու էին, ձայնը չէին լսել, ծառաներ գնացին նրանց ետնից։

Շտապեց Խաչիկը, երկայնատէգ նիզակը, որ վաղուց միւս զէնքերի հետ պարապ էր, ոճորքից

հանեց, պղնձապատ վահանին չրխկացրեց։ Վահանի ցնծագին հնչիւնը Խուլ Խաչիկի սիրտն ու հոգին եռ բերեց։ Ճերմակ մազերը սաղաւարտի տակ ժողովեց, հեծաւ սևաթոյր ձին ու սուրը ձեռին առաջ սլացաւ իւր թոռնանցի փոքրիկ զօրագնդի հետ, որ ընդամենը եօթանասուն հոգուց էր բաղկացած։

Թ.

Առաւօտահովն էր, Նկանայ արևելեան մեծ դուռը արագ-արագ բաղխեցին։ Պահապանը մինչև հարց կըտար թէ ո՞վ ես, դրսից մի սուր ձայն ճչաց.

—Ի՞նչ ես ոչխարի պէս ապուշ կտրուել, Ա՛մբակ։

Այս յանդիմանութեան վրայ Ամբակ դռնապանը իմացաւ թէ ո՞վ է և ի՞նչ սրտի տէր. խկոյն բաց արեց։

Մանողն աղջիկ էր, բիւրեղի պէս սիրուն, շողշողուն. մաղախն ուսից կախ, կլոր քարերը մէջը լիք, պարսուրը թևով փաթաթած, մահակը կռան տակ, փարթամ ծամերը վզի երկու կողմ ծածան ծածան։ Առանց իրաւունք հարցնելու դիմեց ուղղակի աշտարակը, ուր նստած էին Մխիթար երէցն ու Իշխանիկը։

Գողտրիկ սիրուն հայեացքը սփարթնած էր։ Բերանը բանալով այսպէս խօսեց.

—Տէր հայր, ո՞ւր ես պարապ նստել, չէ՞ որ

թաթարները մեր գաւառն էլ մտան։ Ես երէկ դաշտումն էի, որ իշխան Խաչիկի ծղրտոցն իմացայ. ասում են մի քանի մարդով թաթարների դէմ կռիւ է գնացել։ Հապա, միւս իշխաններն ո՞ւր են, միթէ նրանք չե՞ն մասնակցելու։ Ի՞նչ ենք տեսնում, Աստուած, մի՞թէ բացի Խաչիկից իշխան ունենալու չենք և նրա մահից ետ ո՞րբ պէտք է մնայ մեր աշխարհը։ Տէր հայր, գոնէ դուք գնացէք ժողովրդին առաջնորդեցէք, որոնք շուարուել են, մնացել։ Ա՜խ, ո՞ւր էք Հասան, Ճնճղուկ, Թոռնեանի օդը նրա համար ծծեցիք, որ նեղ օրը նրան թողնէք, ուրիշին ծառայէ՞ք. չէ՞ որ մեր երկրի աչքը դուք էիք։ Մի օր պէտք է պարծենաք թէ առիւծ Խաչիկի որդիքն էք։ Ա՜խ, ո՞ւր էր թէ ես լինէի Խաչիկի կորիւնը. կուրծքը ծեծելով մորմոքւում էր սիրուն աղջիկը, այն ժամանակ ցոյց կը տայի, թէ ի՞նչ է նշանակում թշնամուն շամփրած պահելը։ Ի՞նչ արած, սրանց պէսներն են իշխանազունները (ձեռը մեկնեց դէպի այն կողմը, ուր տեսել էր Իշխանիկին կարգնած), որոնք հայրենիքի նեղ օրերին օգնութիւն հասնելու փոխանակ, որը պանդխտութիւն է գընացել օտարի դռներին թափառելու, որն այստեղ կռները խաչած լալկան երեխայ է դարձել, մընացել։

Ամօ՞թ այդպէս երիտասարդներին։

Հովիւ ու գառնարած աղջիկներս արդէն խումբ կազմած մեր արօտներն ենք պահպանում,

գառները թաթարների ձեռից խլում, իրանց քարէ կարկուտով ետ ածում. մեր երիտասարդ իշխանները այս ու այն անկիւնը քաշուած իրանց գլխին են միայն օրոն անում։ Վա՜յ քեզ մեր խեղճ աշխարհ...

Իշխանիկը Բիւրեղիկի վերջին խօսքերը չը-լսեց։ Նա վաղուց աշտարակից դուրս էր փախել աննկատելի կերպով։ Զէնք ու նշանները կապած, գրահը հագած, հէնց ուզում էր ձիու գլուխը դէպի բերդի դուռն ուղղել, Մխիթար երէցը դուրս վազեց առաջը և պաղատաձայն խօսեց.

—Իշխանի՛կ, գլխովդ ման տամ, մեղք արի այս ճերմակ մազերիս։ Հայրդ լալով խնդրել է ու քեզ ինձ պահ տուել. մի՛ գնալ, իջիր այդ ձիուց։ Հօրդ պատուէրը մի՛ կոտրիլ, սպասիր դէթ այսօր մինչև լուր գայ։ Հասանի ու Ճնճղուկի պէս անուշակալ գաւակ մի՛ լինիլ։

Բոյց պատանին վահանով, և տոհմական բոլոր նշաններով սպառազինուած յամառելով պատասխանեց.

—Ո՛չ, տէ՛ր հայր, չեմ իջնիլ. քեզ պէս ճերմակ մազեր իմ հայրն էլ ունի, որ այժմ պատերազմումն է, հապա նրան ո՞վ մեղք գայ և ո՞վ օգնի, եթէ ես իջնեմ։ Չէ՞ որ նա, իմ ծերունի հայրս միայնակ է այժմ պատերազմի դաշտում և թշնամիներով շրջապատած՝ յուսահատ վիճակում «կորիճնե՛ր, կորիւննե՛ր» է կանչում։ Հասուն կորիճները հեռու աշխարհում են, նրանք չգիտեն

իրանց հօր նեղ դրութիւնը, վազեն դան. հապա ես, տէ՛ր հայր, նրա կորիւնը չե՞մ. ինձ նա չէ մեծացրել իւր բազուկների վրայ։ Հապա ես Առիւծ Խաչիկի Իշխանիկը չե՞մ... Եթէ ես էլ նրան միայնակ թողնեմ արեան դաշտի մէջ ու հանգիստ նստեմ. լսողն ի՞նչ կասի։ Չէ՞ որ Թոռնեանցոց ազատութեան յոյսը ես եմ, տէ՛ր հայր։ Կռուի ժամանակ ինչո՞ւ էք կորիւնի ոտն ու ձեռը կապկապում։ Միթէ՞ հայրս չէ ինձ սուր ու նետ վարժեցրել, ինչո՞ւ պէտք է ինձ արգելէր այդ գործածել։ Չէ՞ որ նա այս բոպէիս այդ արգելած բանով է զբաղուած։ Աղաչում եմ, տէ՛ր հայր, մի՛ արգելիր, թող բերդից ելնեմ, հօրս հասնեմ, թէ չէ մահն աչքիս տակն ունեմ, աշտարակից ինձ կը գցեմ դէպի կողքի անդունդը։

Այս ասելն էր, որ Իշխանիկը իւր առաջը կտրող ծառաներին տէգի բութ ծայրով հրելով այս և այն կողմ թափոտեց, Խնուսայ ջրով մնած քուռակի ասպանդակները շարժեց ու ամրոցի բաց դռնով դուրս թռաւ։

Նրան կամեցան հետևել Մխիթար երէցը, և Խաչիկի մի քանի բարեկամները, որ կրակոտ պատանուն բռնելով ետ բերեն և աւելի ամուր արգելանքի մէջ դնեն։ Բայց հասնել չկարողացան. Տէր Մխիթարը մինչև բերդապահներին պատուէրներ տալը բաւական ուշացաւ։

Իսկ Իշխանիկի ձին հովի պէս թռչում էր։

(Ցոռնաստան) Գիտ. ընկերություն
Ասիոյ ազգագրական բաժին

Թ.

Թոռնեանի հարաւում ընդարձակ դաշտի վրայ ահեղ պատերազմի տեսարան էր։

Բիւրաւոր թաթարներ ճակատել էին մի կողմ, իսկ նրանց հանդէպ եօթանասուն հոգով սրամբուած կանգնած էր Խուլ Խաչիկը իւր իշխանական զէնք ու զրահով։ Զինակիցները նրա հրամանին էին սպասում։

Յապաղելու տեղը չէր. նա ձեռով ճակատը շփելուց ետ թաւ աչքերը երկինք գցեց ու այսպէս խօսեց.

—Ո՞վ Խուլ Խաչիկի հզօր Աստուած, կը լսե՞ս արդեօք խոնարհ խնդիրս այս ծերութեան ժամին. անցած փայլուն օրերիս մինը չե՞ս վերադարձնիլ ինձ, որ ամբարիշտ բարբարոսներին հասկացնել տամ, թէ սակաւը միշտ կը յաղթի բազումին, երբ Ստեղծողին իւր պաշտպան ունի։ Չէ՞ որ քո հին Առիւծն եմ, Տէ՛ր, և քո ստեղծած սիրուն Թոռնեանը պաշարուած է։ Աղաչում եմ, տխմար իշխանների սրտով մի՛ անիլ, որոնցից երկուսը իմ որդիքն են...

Այս ասեց ու յարձակման նշանն ինքը տուեց։

Ինչպէս թղթերի մէջ պէտ՛ն-պէտ՛ն անող փայլակ մի վայրկեանի մէջ մէկ թաթարաց բանակի վերևում երևաց, մէկ ներքևում։ Յետոյ արշաւասոյր ձիու փռնչոցը փոքրաթիւ զօրագնդի

մօտ վեր անելով մռնչաց ու թոքերն ուռցնելով գոռաց.

—Դ՜է, սկսենք, իմ քաջ թոռնեանցիք։

Ինչպէս աղեղի վրայից պինդ արձակուած նետեր՝ Խաչիկի արիասիրտ ընկերները պոկ եկան կանգնած տեղերից ու ձայն ձայնի տուած յարձակուեցին թաթարների վրայ։ Խաչիկն ամենի առաջն էր. ճակատը դէմ արած հազարաւոր թշնամու՝ լայնաշեղբ թուրը գերանդու պէս ածում էր և ամեն մի ածելով գլուխ ու կուռ կտրում թռցնում. ահեղ ձայնով, ուժգին ծղրտոցով գազան թաթարներին սրտաթափ անում, սասանեցնում։ Իմաստուն և հաւատարիմ ձին դէս ու դէն թեքուելիս տիրոջ տակին ճմճրմատում էր ու անշնչացած դիակները կոխոտելով թռչկոտում։ Արեան գետեր էին հոսում դաշտի վրայով։ Թաթարները որ առաջին անգամ Խաչիկին իւր փոքրաթիւ զօրքով տեսնելիս ծաղրել էին, այժմ իրանց կոտորուածը տեսնելով՝ ապշած զարմացած էին մնացել։

Թաթարների մահուան օրն էր կարծես. Խաչիկի ու ընկերների յուսահատ կռիւն ու ճարպիկութիւնը նրանց խսպառ զարհուրեցրել էին։ Անթիւ թաթարներ արիւն-ըրդուշ էին եղած. մնացածները Առիւծ Խաչիկի ձեռքից ազատուելու համար միակ հնարը գտնում էին փախչելու մէջ։

Բայց այդ շփոթ ըոպէին ահա թէ ի՞նչ պատահեց ու մեր առիւծասիրտ Խաչիկի մէջքի սիւ-

նը կտրեց։ Յանկարծակի մի ձիաւոր ուրուրի պէս թռած հասաւ պատերազմի դաշտը. ճերմակ ձին քրտնքում կորած, իւր աչքերն էլ արիւնը կոխած՝ առանց մի ըոպէ դադար առնելու, ընկաւ թաթարաց բանակի վրայ։ Սիզախ ձիաւորը յանդուգն յարձակումն անելով, ճչալով, գոչելով այնպիսի հարուածներ էր իջեցնում առաջը դիզուած զօրքի վրայ, որ գոռ բանակը փոթորկից փախս առած ամպերի պէս հալածւում, դէս ու դէն էր ցրւում։ Ձիաւորի զրահը արծաթի պէս պլսպլզում էր. ինչպէս կատաղած առիւծ տեղը հանգիստ չէր մնում. ուժգին թափն անելով կամ խփում էր կամ կտրած գլուխները աջ ու ձախ շպրտում։ Նրա ծղրտոցն ու ձիու վրընջոցը աւելի խիստ էին քան նետ ու աղեղի ճայթիւնն ու ճարճատիւնը։

Խուլ Խաչիկը կռուի տաք ու բորբոք ժամանակ որ աչք չբարձրացրեց ու իւր պատանի Իշխանիկին արիւնարբու թշնամիների հետ կռուելիս, մարտնչելիս տեսաւ, մնաց երեխայի պէս տարեկուսած։ Երկաթի պէս տղամարդը լալագին ձայնով գոչեց.

—Ա՜խ, իմ սիրուն Իշխանիկ, ինչո՞ւ անուշակալութիւնովդ մարում ես իմ տան ճրագը։ Ինչո՞ւ անհամբերութիւնովդ ծերութեանս օրերի յաղթանակը սուզի ես ուզում փոխել։ Տխմար տղայ, կարծում էիր թէ Առիւծ Խաչիկին կը յաղ-

թեն թաթարները, որ արգելանքից պատերազմի դաշտ ես փախել։

Մորմոքուելով յոգոց էր հանում, գոչելով «Իշխանիկ» կանչում, բայց նրա ձայնը խեղդւում էր զրահների ճայթման և վահանների կոփման մէջ։

Ուշակալ կորիւնը այժմ դարձել էր խուլ. այնպէս տաքացած ու ոգևորուած էր, որ հօր ձայնը ամենևին չէր լսում։ Թաթարներով շրջապատած էր. պաշտպանուելու համար վահանիկը լիսեռի պէս ձեռին պտտում էր. անձի այդ պաշտպանակը նետերի հարուածներից արդէն ծակծկուել էր։ Դարձեալ հանգիստ առնել չէր ուզում. երկու անգամ յարձակուելուց ու անթիւ նախճիր գործելուց ետ մտադրւում էր երրորդ անգամ էլ յարձակումն անել ու ճանապարհ բանալով դէպի հայրը սլանալ։

Մեծ թափով երրորդ անգամ էլ զրոհ տուեց առանց վահանի, սուսերամերկ, առաջն եկողներին տապալեց, կործանեց։ Բայց այս անգամ թշնամիները գլխի ընկան, թէ ո՞վ է այս կատաղի ձիաւորը։ Մանկահասակ դէմքին և գերբնական ուժին նայելով սկզբում երկնքից իջած հրեշտակ էին կարծել ու սարսել։ Այժմ երբ տեսան, որ ծերունի Խաչիկը դէպի նա ողբաձայն կանչում է, իմացան որ նրա որդին է. ամենքը մի կողմից զգաստաբար վրայ թափուելով կամեցան ձիուց պոկել և հաւի պէս փետրել։

Սակայն Իշխանիկը հեշտով չէր կալնւում. նա ձեռի սուրը թշնամու գլխին կոտրելուց ետ սկսել էր բազուկները բանացնել։ Այդտեղ միայն յոգնութիւն զգաց ուժեղ կորիւնը, թշնամու տէզերն ու նիզակները նարեկի պէս նրա վրայ դալով բազուկներն արդէն չախչախել էին.

—Հասիր, հայր իմ, Իշխանիկդ մենակ է, լսուեց պատանու յուսահատ ճիչը։

Ձիրն, իմաստուն ձիրն խառնիխուռն ձայների մէջից որոշելով իւր սիրելի տիրոջ հառաչը, կատաղաբար փռնչալով առաջը կանգնողներին կոխոտեց. ուզում էր թշնամիների հոսանքից դուրս փախցնի դէպի հայ զօրագունդը, ուր ականջները ցցած խրխնջում էր իւր ախոռակից մեծ ընկերը, Խաչիկի երիվարը։

Հէնց այդ րոպէին Իշխանիկի վրայ մի լայնաշեղը թուր շողաց և զօրեղ ձեռքի հարուածը վայր գլորեց նրան ձիուց։ Խաչիկը որ մինչև այդ րոպէն յուսահատաբար կռուելով յաղթութիւնը տարած էր ու որդուն մօտենալու վրայ էր, տեսնելով այն անգութ հարուածը, հէնց իմացաւ աշխարհը գլխին մթնեց։ Խելքը կորցրածի պէս ադիոդորմ ճչաց ու ձիու վրայ կուչ եկաւ, կարծես աղիքները կտրտուելիս։ Պոդուատի պէս ամուր ձեռները կսկծից թուլացան. թուրն ափի մէջից ընկաւ...

Արիասիրտ զինակիցները առանց շփոթուելու իրանց մէջն առան թէ ձին, թէ իշխանին։

Թաթարները Իշխանիկի զէնքերն ու զարդերը կողոպտեցին, բոլորովին մերկացրին ու յետոյ մաս-մաս կտրտեցին նրա ծաղկափթիթ մարմինը։ Միւս մասը ոգեորուած յարձակուեց Խաչիկի խմբի վրայ։

Առիւծ իշխանը ուշքը կորցրած ընկած էր տաղնապի մէջ։ Փոքրաթիւ զօրականները իրար մէջք տալով կռիւը շարունակեցին յուսահատաբար։ Վերջ ի վերջոյ տեղի տուին անհամար գազանների առաջ, որպէս զի Մխիթար երէցի խորհրդին հետևելով հասնեն Նկան, ամրոցը պաշտպանեն, ուր պատսպարուած են գաւառի ժողովրդներից հազարաւոր ընտանիքներ։

Թաթարները գտան Խուլ Խաչիկին հառաչելիս։ Վրէժխնդրութեամբ վառուած բաւական չը-համարեցին իշխանական հագուստները, զէնք ու զրահները կողոպտելը, այլ և դիւցազին անշնչացնելուց ետ մարմինը յոշոտեցին... բարբարոսին վայել անարգ վրէժ։

Թաթարները Թոռնևանի տէրերին նահատակելուց ետ ապահով մտան գաւառը և սկսան աւերել ու թալանել այստեղ, այնտեղ։ Բայց տեսնելով ժողովրդի քաջաքաջ դիմադրութիւնը, նրանք դրանից վատ բան դուշակեցին, մի գուցէ նոր Խաչիկներ լոյս ընկնեն ու երկրի մէջ ջարդ տան իրանց. շտապով որքան կարողացան մի օրուայ միջոցում կողոպտել, կողոպտեցին, այդ աւարով բաւականանալով հեռացան Հեր և Զարևանդի կողմերը։

ԺԱ

Տէր Մխիթարը որ Իշխանիկին հետևելով չէր կարողացել նրա յամառութիւնը կոտրել և Նկան վերադարձնել, պատերազմի դաշտն այն ժամանակ հասաւ, երբ քաջասիրտ կորիւնին անգթաբար յոշոտել յարձակւում էին հսկայ Խաչիկի վրայ։

Լալ-աչքով տեսնելով իշխանի ողբալի դրութիւնը, զօրականներին խորհուրդ տուեց առանց յապաղելու իրան հետևել։

Քաջ երէցն իսկոյն մի քանիսի ուղարկեց այս ու այն կողմ, որ բնակիչներին զինելով ընդդիմանան Թաթարներին։ Մի քանիսին էլ նշանակեց, ու մօտակայ գիւղերի երեխանց ու կանանց բերեն ամրոցը։

Բիւրեղիկը մի խումբ աղջկերանց գլխաւորն էր, որոնք քար ու պարսուտով, բհիրներով զինուած քարայրերի գլխներին նստած հսկում էին իրանց հօտերին ու խաշներին։

Այդ անարկիւղ խմբերի քաջութիւնը Թաթարների աչքը այնպէս վախեցրեց, որ նրանք այժմ չնչին աւարով շատանալով հեռացան Թոռնևանից, միտները դնելով քիչ միջոցից ետ գալ և երկիրը տակն ու վրայ անել։ Նրանց աչքը մընացել էր Թոռնևանի գեղատեսիլ աղջիկների ու անթիւ հօտերի, նախիրների վրայ, որոնք ամբաս պրծան նրանց ձեռից։

Թաթարների հեռանալուց ետ երկիրը սուզի

մէջ թաղուեց. Թոռնեանցիք մնացին վիշները ճըկած, սրտները տխուր իրար երես նայելիս։ Ստացած վէրքը մեծ էր և խոր։ Խաչիկ ու Իշխանիկ էին կորցրել, մեծ թէ փոքր, կին թէ մարդ ամենքըն էլ նրանց սուգն էին անում։

Թոռնեանի պահապան հրեշտակը այլևս չկար։ Չկար նոյնպէս իրանց ապագայ յոյսը, քաջ Իշխանիկը։

Մխիթար երէցը լալով ժողովեց հօր և որդու արիւնաշաղախ մարմինները, ողջ գաւառի ժողովրդեան առաջ հողին պահ տուեց Նկան ամրոցի եկեղեցու գաւթում։ Իշխանիկին համբուրելով պարկացրեց հօր ծոցում ու դարձաւ ժողովրդին ասեց։

—Թոռնեանի սգաւոր ժողովուրդ, առանց իմ ասելու, դուք գիտէք թէ Առիւծ Խաչիկը իւր աշխարհը ինչպէս էր սիրում, նրա անկախութեան համար քա՞նի կռիւներ է մղել։ Տեսաք նոյնպէս թէ նրա կորիւնը, արժանաւոր զաւակը ինչ անձնուիրութեամբ հօրը գերազանցեց։ Պատանի Իշխանիկը այն հերոսութեան օրինակը ցոյց տուեց, որի նմանը Վասպուրականը իւր ստեղծման օրից ոչ տեսել է և ոչ լսել։ Խաչիկի աւագ և միջնակ որդիքը ապերախտ վարմունքով ժառանգեցին առաքինի հօր անէծքը։ Խաչիկն անիծեց իւր որդոց, որոնք իրանց նախնեաց երկիրը թողած գընացին օտարին ծառայելու և մուրացկանութեամբ փառք վաստակելու։ Խաչիկի անէծքին ես էլ այսօր կցում եմ իմ նզովքը։ Թող այդ անէծքն ու նզովքը ծանրանան Հասանի ու Ճնճղուկի գլխին, քանի որ օտարասէր կը մնան ու վրէժխնդիր չեն լինիլ թաթարներին իրանց հօր և եղբօր արեան համար։

—Մենք ևս անիծում ենք, միաբերան ասին ժողովրդի ծերերն ու պառաւները. յետոյ նրանցից ամեն մինը մօտեցաւ, համբուրեց Խաչիկի և Իշխանիկի հողաբլուրը ու խորին տխրութեամբ հեռացաւ իւր տունը։

Այդ դէպքից ետ Մխիթար երէցի սրտին սուր խփէին՝ արիւն չէր կաթիլ։ Առանց Իշխանի ու Իշխանիկի Նկան բերդը տանջարան էր թւում նրան։ Ամրոցի ամեն մի անկիւնը անթիւ քաղցր յիշատակներ էր վերանորոգում և դառնութիւնով նրա սիրտը լցնում։ Այդ կսկիծն անկարող էր տանել։ Վերկացաւ խեղճ երէցը, գնաց բնակարան հաստատեց այն ձորի քարայրում, որի շրջակայքում Բիւրեղիկն արածեցնում էր իւր գառները։

Երէց ու գառնարած՝ մինը ծերունի, միւսը պատանի իրար սիրում, իրար մխիթարում էին և Թոռնեանի կորած փառքերը յիշելով տխուր օրերը մթնացնում։

ԺԲ.

Եօթ տարին անցած ուրն էր գնում, Թոռնեանի կորիւնները դեռ դեգերում էին Կ. Պոլսում։ Հայ զօրականները զզուել էին պանդխտութիւնից,

նրանք վաղուց վերադարձած կը լինէին Վասպուրական, եթէ Հասան ու Ճնճղուկը խորամանկ կայսեր խոստումներով հրապուրուելով չխաբուէին ու տարին տարու վրայ չմթնացնէին։

Վերջապէս վատանշան Միքայէլը գլորուեց, գնաց. նրա մահից ետ միայն նրանք էլ խելքի եկան, զգացին իրանց տխմարութիւնը։ Նոր մտածեցին երիտասարդ իշխանները հայրենիք վերադառնալու վրայ։

Տխուր էին նրանք, ինչպէս յուսախաբ. որովհետև սպասած փառքերն ու պատիւները չըստացան։ Այդ վշտին աւելանում էին հայրենիքի կողմերից լսուող աւերածութիւնները։ Քանիցս յիշեցրել էին կայսրին, որ Վասպուրականը անտէր է, շրջակայ վայրենի ցեղերից հարստահարութիւններ է կրում. կամ մի քաջ և բարեմիտ կառավարիչ ուղարկէ կամ իրանց թոյլ տայ, որ գնան իրանք թշնամիներին հալածեն և հայրենի երկիրը կառավարեն։

Կայսրը հաստատ կամք չէր տալիս և ձրգձգում էր։ Նրանք էլ ճարահատեալ սպասում էին։

Կայսրը մահացաւ։

Երբ Հասանն ու Ճնճղուկը իրանց յոյսերի մոխրի վրայ նստած՝ փոշմանելով մտածում էին. յանկարծ Բաբիկը, իրանց հին ծառան լոյս ընկաւ նրանց առաջ ՝ախուր-տրտում։ Էլ չէին իմանում, դեռնից բսաւ, թէ երկնքից իջաւ։ Իրանց վշտերը փարատելու համար դեռ ցանկանում էին հայրենիքից, տանից լուրեր հարցնել, ապա թէ գալստեան պատճառն իմանալ, բայց Բաբիկը խոնարհ ողջունից ետ այսպէս սկսեց պատմել նրանց հայրենիքի մասին.

—Մեծ իշխանը չկայ այլ ևս, թաթարներն էլ, ախ, սպանեցին։ Թաթարներն եկան Թոռնեանն աւերելու, ժողովրդով առաջներն ելանք, չթողինք։

Մի քիթաբ երէցը, որ մեծ իշխանի սիրելին էր, նրանց թաղեց ու ձեզ նզովեց։ Այդ նզովքը ձեր գլխից չպէտք է հեռանայ, մինչև դուք ձեր աշխարհը չդառնաք։ Մեծ իշխանը յոյս ունէր, որ դուք կը դաք, իւր հողը կը թեթևացնէք, աշխարհը կը կառավարէք։ Թշնամիքը ձեր բացակայութիւնից օգուտ քաղելով, թափուեցին Թոռնեանի սահմանները, մեզ մօտ ոչ գօրք կար, ոչ յոյն կառավարիչ... Ամենն էլ թողել էին մեր աշխարհը անպաշտպան և հեռացել կայսեր քաղաքը, մինչև անգամ դուք մեր հայ գնդով։ Այդ ժամանակ մեծ իշխանը դառն սրտմտութեամբ անիծեց ձեզ իբրև օտարասէրների և ինքը զէնք վերցնելով եօթանասուն չափահաս ընկերների հետ գնաց բիւրաւոր թաթարների դէմ պատերազմելու, մեր աշխարհի սահմաններից նրանց քշելու։

Այս խօսքերը որ Հասանն ու Ճնճղուկը լսեցին՝ այնպէս դառան, կարծես վշտի ու կսկիծի ձեռից կատաղած։ Երկուսով ծնկներին խփելով գոչեցին լալագին.

—Արդար էր մեր հայրը. մենք տխմար էինք ու ապերախտ։ Արժանի ենք թէ անէծքի և թէ նզովքի։ Մեր յանցանքը դրանցով չի քաւուիլ, և մեր մահով չի վերջանալ. այդ նզովքը պէտք է անջնջելի տառերով գրել մեր ճակատներին և մեր գանգերը Վասպուրականի բարձր ժայռերի վրայ տնկել, որ եկող սերունդները մեր անմիտ և յիմար ընթացքը կարդալով շարունակեն նզովել մեզ։ Տխմարի պէս թողինք մեր քաղցր հայրենի աշխարհը թշնամու բերանում ու եկանք մեր զօրքով օտարին ծառայելու, օտարի լուծը յօժարակամ կրելու։

—Հասան, գոռաց Ճնճղուկը խոշոր աչքերը սրբելով, վեր, վերցրու զօրքդ, գնանք Թոռնևան։

—Գնանք, եղբայր ջան, կրկնելով և գրկելով եղբօրը, լաւ է ուշ, քան երբէք. աւելորդ է այսուհետև ուրիշին յոյս կապելը։ Թքած այն բոլոր հայերի վրայ, որոնք թաթարի, արաբի, յոյնի ձեռից այսքան հարստահարուելուց, վնասուելուց ետ դարձեալ խելքի չեն գալ, կը շարունակեն նրանց ձեռ կարկառել և նրանցից ողորմութիւն խնդրել։ Յոյնը բաց աչքով մեզ կուսակալ կարգողը չէ, այն էլ Վասպուրականի վրայ և ոչ էլ մեր աշխարհը թաթարներից ազատողը. բաւական էր, որքան մեր սահմանն ու աշխարհը խլեցին մեր ձեռից պարսիկը, արաբը, յոյնը։ Այժմ էլ թոյլ տանք թաթարը ազատի մեր սիրուն երկիրը։ Չէ, հերիք էր այդ անմիտ ընթացքը։ Արի

մի անգամ կրկնենք մեր հօր սիրելի խօսքը— «սահման քաջաց, զէնն իւրեանց»։ Եթէ մեր կարճութիւնով մինչև այժմ կայսրերն են օգտուել, փառաւորուել, ինչու այդ շնորհքը այսուհետև գործ չդնենք այն անմտան աշխարհի օգտին, որից ստացել ենք։

—Գնանք եղբայր, ձեռը մեկնեց Ճնճղուկը. ինքներս հալածենք մեր աշխարհից թաթարներին և ինքներս լինենք մեր երկրի խնամակալը։ Բաւական էր, որքան մեր Սենեքերիմի պէս թագաւորների, մեզ պէս իշխանների թուլութիւնից օգուտ քաղելով մեր վրայ խնամակալ դարձան կոպիտ արաբը, ողորմելի պարսիկը և նենգաւոր յոյնը։

Այսպէս զղջալով Թոռնևանի կարիճները իրանց սխալ վարմունքի վրայ՝ ուխտեցին թողնել Կ. Պոլիսը և վերադառնալ հայրենիք։

Եւ դարձան։

Գ.

Հայրենի ձիւնապատ լեռները երևալուն պէս Հասանի ու Ճնճղուկի սրտերը թունդ-թունդ եղան։ Մինչ հայ զօրականները հայրենիքի պռունկը հասնելով ծունր էին դրել, որ մայրենի քաղցր հողը համբուրեն, Հասանը զգացուած սրտով դարձաւ եղբօրը.

—Ճնճղուկ, անմտան եղբայր, մեզ ամօթ է հայրենի հողը մտնել, մինչև մի խոստում չանենք։

—Ի՞նչ խոստում, քաջ Հասան, հրամայիր, ամեն տանջանք, ամեն խոստումն յանձ կառնեմ, միա՛յն հօրս անէծքից ազատուելու հնար գտնեմ։

Հասանը շարունակեց.

—Հայրենիք ունենք խլուած, դրաւ դրուած. հայր ու եղբայր ունենք թշնամու ձեռով նահատակուած։ Ի՞նչ ես ասում, եղբայր, չպահանջենք մեր պապերի երկիրը, յետ չառնենք մեր սիրելիների արիւնը։

—Հապա թողնե՞նք։ Անշուշտ ամեն վտանգ յանձն առնենք, միայն թէ մեզանից մեր հօր անէծքը վերացնենք։ Ասա ի՞նչ անենք, Հասան եղբայր, ասա։

—Ահա, ճնճղուկ եղբայր, ինչ անենք. մեր փայլուն հանդերձի վրայ հագնենք այս սև շորը և սուգ պահենք։ Այն ժամանակ միայն դէն դցենք մեր վրայից այս սուգի նշանը, երբ թաթարներից մեր հօր ու եղբօր արեան փոխն առած կլինենք, իսկ եթէ անկարող ենք այդ անելու, թող ուրեմն ծանրանայ մեր գլխներին մեր հօր անէծքի հետ և Տէր Մխիթարի նզովքը։ Այս սուգի շորը մեզ պէս ապերախտների կեանքը սեացնելով թող անբաժան մնայ մեզանից մինչև գերեզման։

—Համաձայն եմ, թող ասածդ լինի, պատասխանեց ճնճղուկը և լալով Հասանի վզով փաթաթուեց։

Երկու եղբայրն էլ սգաւորի հագուստով, դառնացած սրտով մտան Վասպուրական.

—Աւա՜ղ մեր կեանքին, սրտամորմոք գոչում էր Հասանը, հայրս ու աշխարհս մեր դարձին էին սպասում, որ մեր յաջողութիւններով փառաւորուեն, ցնծան. այժմ չկայ ոչ առիւծ Խաչիկ, ոչ կորիւն-Իշխանիկ։ Նրանց աչքերը փակելուն էլ արժանի չեղանք. որքան քամբաղդ ենք։ Կարօտ մնացինք թէ եղբօր վերջին խօսքի և թէ հօր օրհնութեան։

—Եղբայր, թողնենք լացը, ասեց ճնճղուկը, մեզ վրէժխնդրութիւն է պէտք. արտասուելու ժամանակ չէ. Նկանն արդէն երևում է ու մեզ վրայ արեան պարտականութիւն դնում։ Ահա այն ճանապարհները, որտեղ պատանեկութեան ժամանակ ձիավարժութեամբ և նետաձգութեամբ ենք պարապել։ Ահա իշխանական ապարանքը—մեր ծննդավայրը, ահա և ուսադ աշտարակի դուռը, բայց կանաչ-կարմիր դրօշակը ամրոցի գլխին չի ծածանում։ Եղբայր իմ, ամեն տեղ ամայութիւն է...։

Երբ մօտեցել էին ամրոցին, սգաւոր կորիւններին մուտքի մօտ դիմաւորեց մի կոյս աղջիկ՝ մաղախն ուսին. հագուստն անպաճոյճ, բայց հրեշտակից չքնաղ։ Սկսեց այսպէս խօսել։

—Ողջոյն ձեզ սիրուն աշխարհի անկարեկից իշխաննե՛ր, ողջոյն ձեզ Առիւծ իշխանի ապերախտ զաւակնե՛ր։

Հասանն ու ճնճղուկը անվրդով լսեցին համարձակ աղջկայ այդ կշտամբանքները. այնքան

վշտացած էին, որ անգամ թւում էր թէ իրանց սրտերը թեթևութիւն էին զգում այդ խօսքերից։

Բիւրեղիկն էր այդ աղջիկը, որն սկսեց շարունակել.

—Թոռնեանի աղջիկներն անգամ պարզերես են ձեզանից. նրանց պահ տուած գառները, խաշները անվնաս են, իսկ ձեզ պէս կորիճների յուսով թողած աշխարհն այս խեղճ օրին է, օտարասէր հոգիներ։ Արդեօք դուք չէ՞ր Տէր Մխիթարը ձեզ վրայ յոյս դնում, թէ դուք կարող էք Սենեքերիմի կորցրած աշխարհը ետ առնել։ Արդեօք դուք չի՞ սպասում ծերունի երէցը ձեր օրով տեսնել Վասպուրականի ազատութիւնը։

—Խելօք կոյս, թախծալից աչքերը բարձրացնելով խօսեց Հասանը, այդ դու չես խօսում, քեզ խօսեցնողը Թոռնեանի ազատարար հոգին է. այժմ այն ասա, ինչ անենք որ նզովքից ու անէծքից թեթևանանք։

—Ահա թէ ինչ, խօսեց աղջիկն աներկիւղ, քանի որ Արծրունեաց տոհմի նշանակը օտարի ձեռին զերի է, ոչ առիւծ-Խաչիկը գերեզմանում կը խաղաղուի և ոչ քաջամարտիկ Իշխանիկի շիրմի վրայ շուշան ծաղիկ կը բանի։ Դուք ձեր տխմար ընթացքով հօր ու եղբօր մահուան պատճառը եղաք. այժմ պէտք է նրանց շունչ ու հոգի պարգևէք։ Եթէ անկարող էք նրանց կեանքը վերադարձնել, ապա ամենաթանկ բանը, մեր աշխարհի ոտնակոխ եղած պատիւը պէտք է վերա-

կանգնեցնէք ու իշխանական խլուած զէնքերը, տոհմական զարդերը ետ խլէք թաթարներից։

Բիւրեղիկն այս խօսքերը ասելուց ետ խոնարհ գլուխ տալով կամենում էր հեռանալ, զօրեղ Հասանը բոլորովին նուաճուած համարձակ հովուհու փարթամ գեղեցկութիւնով՝ մեղմ խօսեց։

—Դու կարելի է կարծում ես, Թոռնեանի դուստր, որ քո յանդիմանական խօսքերը մեզ զայրոյթ են պատճառում. ամենևին ոչ. անհոգ կաց, երգում է հօրս ու քաջ Մխիթար երէցի հոգուց կոչ ունես, նրանց աշակերտել ես։ Ասա, համարձակ ասա, ովքեր կան այժմ հօրս հաւատարիմ ընկերներից կենդան ու ողջ։

Բիւրեղիկը թուեց մի քանի անուններ։

—Այժմ ազատ ես, ասեց Հասանը, գնա Մխիթար երէցին իմաց տուր, որ զայ ամրոցը։

—Ոչ Մխիթար երէցը և ոչ այլ ոք չեն մտնիլ Նկան ամրոցը, մինչև չլսեն որ Հասան և Ճնճղուկ իշխանները թաթարներից առել են ծերունի Խաչիկի և պատանի Իշխանիկի արեան վրէժը, պատասխանեց Բիւրեղիկը և մի ակնթարթում անյայտացաւ առաջներից՝ խլած իւր հետ տանելով հսկայազօր Հասանի ուշքը միտքը։

ԺԴ.

Այդ օրուայ երեկոյեան Նկան ամրոցի աւագ աշտարակում խորհուրդ կազմուեց։ Խորհրդի ո-

բոշումն այս էր—նախ՝ Թոռնևանի շրջակայ գաւառներում իմաց տալ իշխանների գալատեան մասին, երկրորդ՝ մի ձիաւոր ուղարկել Հեր և Զարևանդ, որ ասի թաթարներին թէ՝ Հասանն ու ճնճղուկը այլ ևս չեն գալու, Թոռնևանը մնացել է անտէր։

Այսպէս անելու խորհուրդն այն էր, որ թաթարներին խաբեն։ Նրանք որ լսէին թէ ամեն բարիքներով լի Թոռնևանը անտէր է, քաղցած գայլերի պէս ոռնալով կը վազէին կողոպտելու։

—Թաթարներին պատժելու միակ հնարը այն է, որ իրանց երկրից կարողանանք դուրս հանել, ասում էին խորհրդականները։

Հասանը հաւան կացաւ այս խորհուրդին և իսկոյն հնար մտածեց. կանչեց իւր մօտ քուրդ ռէսին, որ իրանց հին բարեկամն էր և քաջասիրտ մարդ։

Եկաւ քուրդը, խոնարհ ողջունելով Հասանին տուի հողը համբուրեց։

—Ինչ ես հրամայում, իշխան, իմ գլխի տէր։

—Ռէս, հօրս հին բարեկամ, ահա տալիս եմ քեզ հազար դահեկան ոսկի և գիտես ինչ եմ խնդրում։

—Անպատճառ զօրք կամ օգնութիւն, վրայ բերեց բարեսիրտ քուրդը։—Օ՜, Հասան իշխան, չես կարող իմանալ թէ իմ սիրտը որքան է ցաւել Առիւծ իշխանի ու կորիւն Իշխանիկի մահուան վրայ։

—Ոչ, չիմացար, ես զօրքի չեմ կարօտ, ռէս, այլ վրիժառութեան, հօրս ու եղբօրս սպանողների արեան։ Հասկանում ես։

Իւր միտքը մանրամասն բարեկամ քուրդին յայտնելուց ետ ասեց.

—Նստիր ձիդ, գնա Հեր և Զարևանդի թաթարների մէջ պտտիր և շարունակ Թոռնևանցոց բամբասիր։ Ամեն կողմ ձայն դցիր, թաթարի մեծ ու փոքրին պախարակիր. «Ինչ էք պարապ անշարժ նստել, ասա, ահա Թոռնևանը բարիքներով լի ու անտէր, գնանք, աւերենք, գերենք անասուններ, հարս ու աղջիկներ...»

—Աչքիս ու գլխիս վրայ, ասեց քուրդը և խոնարհելով մինչև գոտիկ, շողշողուն ոսկիները ծոցը լցրած շտապեց իւր տուն։

ԺԵ.

Հետևեալ օրը քիւրդ ռէսը ծպտուած, ձիու քամակը թռած՝ նետ ու նիզակ ճոճելով իջաւ Հեր և Զարևանդ։

Թաթարներին մի անգամ ասելը բաւական էր, էլ կարիք չկար խօսքով նոր համոզելու, քանի որ կողոպուտի քաղցը համը դեռ նրանց ատամների տակն էր։ Քուրդի հրաւէրի վրայ հող ու քար իրար գլխի տալով ասանուհինգ հազար թաթարներ երկու օրում իրար կուշտ հաւաքուեցին։ Ամենն էլ զինուած թափուեցին Վասպուրական, որ ամբողջ Թոռնևանը, քանի որ Հասանն

ու Ճնճղուկը չեն եկել, կողոպտեն, այրեն, Խաչիկի պէս իշխանի երկիրն էլ անհետ անեն։

Թաթարները՝ ամենն էլ հեծեալ, մտել էին Թոռնևանի գիւղերից մինը, ուզում էին կողոպուտն սկսել, յանկարծ նրանց ականջով ձիանոնց տրոփիւն ընկաւ։ Հինգ հազար սպառազէն զօրք գալիս էր հանդէպի կողմից։ Անտէր ու որբ մնացած Թոռնևանից այդքան կորիճների դուրս գալը սարսուռ գցեց խուժադուժ Թաթարների սըրտերը։

Հասանը վիթխարի հասակով մի կրակոտ երիվարի վրայ զօրքի առջևից ընթանում էր և առիւծի նման ընչացքները կրծելով մռնչում։

Ճնճղուկը նոյնպէս զրեղ սպառազինուած, ուղի նշանը Հասանի պէս զրահով պատ գցած զօրքի մի մասի առաջ ման էր գալիս ձիով և խրոխտ ձայնով ոգևորում։ Թաթարները կողոպտելու միտքը թողած պատրաստուեցին կռուի։

Երկու բանակները ճակատ-ճակատի կանգնած սրտատրոփ սպասում էին պատերազմի նշանին։ Հասանը Ճնճղուկի հետ երկու խօսք ասելուց ետ, համբուրեց նրան իբրև վերջին հրաժեշտ և իսկոյն երկու բանակի մէջտեղը գալով գոռաց դէպի թշնամիք որոտաձայն.

—Թէպէտ մեզանից երեք անգամ շատ էք, միայն իմացէք որ կռուելու ենք մինչև վերջին հոգու մեռնելը։ Նախ քան կռիւն սկսելը—ասացէք, ո՞վ է այն մարդը, որ հօրս յոշոտել է։ Թող

դուրս գայ մենամարտենք, կամ արեան վրէժն առնեմ, կամ ես էլ նրա սրով մեռնեմ։

Առ ժամ թաթարաց զօրագունդը կատաղի ծովի պէս ալեկոծուեց։ Բայց շատ չքաշեց բազմութեան միջից յանկարծ դուրս թռաւ մի հսկայամարմին խափշիկ՝ ընտիր նժոյգի վրայ։ Կերպարանքն աւելի ահարկու էր քան թէ սպառազինութիւնը։

Սա զարհուրական ձայնով պատասխանեց Հասանին.

—Հօրդ սպանողին էիր ուզում. ահաւասիկ ես եմ։ Թէ կասկածում ես, լաւ նայիր, ահա այս նրա ձին, այս էլ նրա թուրն ու դրօշակը։ Եթէ զո՞ւր չի խրոխտալդ, եթէ վախկոտ հայ չես, առաջ արի, ա՛ռ և տա՛ր։

Այս խօսքերի վրայ թաթարները հպարտացան, փքուեցին. իսկ հայերից ոմանք սոսկացին ու վախեցան։

Այն ինչ Հասանն էր՝ տեղն ու տեղը ամեհի առիւծ դառած վրէ՛ժ գոռաց։ «Վրէ՛ժ» գոռալը, ակնթարթում վրայ հասնելն ու խափշիկին գետին տապալելը մէկ արեց։ Թուրն այնպէս իջեցրեց, որ խափշիկի թանձր մարմինը երկու կէս եղաւ ու սրի ծայրը գետնին առաւ։

—Ա՜խ, յանդուգն արարած, դու էիր մնացել քո կեղտոտ լափը թափես հայ իշխանի գլխին։

Հօր ձին, զրահն ու զէնքերը խլելով կայծակի արագութեամբ դարձաւ իւր բանակը։

Հայ զօրականները ցնծացին ու աւելի սրբոտվացան։ Իսկ Ճնճղուկը, որ քիչ առաջ հերսից տեղը չէր կարողանում հանգիստ կանգնել, եղբօր յաջողութիւնից խրախուսուած առաջ եկաւ ու դէպի թշնամի բանակը բարձրաձայն գոչեց.

—Ձեզ եմ ասում, արիւնարբու թաթարներ, եթէ քաջութիւն ունէք, տուէք իմ ձեռն այն մարդուն, որ սպանել է իմ Իշխանիկ եղբօրը. կամ ես մեռնեմ կամ նա։

Նրա հրաւէրի վրայ այժմ թաթարների բանակից դուրս եկաւ մի ահեղակերպ պարսիկ։ Ճնճղուկին արհամարհելով ոմբարտաւանի պէս պատասխանեց.

—Եղբօրդ սպանողի՞ն ես ուզում, ահա ես եմ, լաւ տես։ Բայց խելքդ ուրիշի վրայ չգնայ, զգոյշ կաց, թէ չէ եղբօրդ հացից կուտացնեմ։ Ահա եղբօրդ ձին, ահա նրա դրօշակն ու նշանն էլ թեխ։ Ահաւասիկ նրա զէնքերը։ Եթէ սիրտ ու տղամարդութիւն ունես և սուտ չէ պարծենալդ, առաջ արի ու խլիր։

Ճնճղուկը մի վարկեան աչքերը երկինք ուղղած գոչեց.

- Ծերունի հօրս Աստուած, հօ՛ դիտես ի՞նչ սրբազան կրակ է վառ դցել սիրտս։ Քեզ եմ կանչում, ոյժ տուր, պատանի եղբօրս արեան վրէժն առնեմ, ապա թէ...

Դեռ խօսքը չաւարտած հուժկու Ճնճղուկը

թափն արած դիմեց դէպի ասպարէզում կանգնած հակառակորդը։

Կայծակի արագութեամբ հասաւ պարսկին, որ դեռ շարունակում էր հայհոյանքը պլոկ բերանով։ Սուրը մի անգամ վրայ բերելով այնպէս խոր կտրեց ուսից դէպի կուրծքը, որ թշուառ պարսիկը ճապաղած մնաց։ Ճերմակ ձին տակից հանելով, վրայից էլ եղբօր նշաններն ու զէնքերը խլելով գոհ և ուրախ դարձաւ իւր բանակը։

Նափշիկի ու պարսիկի սատակելը տեսնելով թաթարներն արդէն վախակալել փախչելու էին պատրաստուում։

Բայց գոռոզ զլխաւորները իրանց շատութեան վրայ յոյս դրած մնացին, որ կռուելով յաղթութիւնը տանեն։

Հայ զօրագունդն էլ վաղուց ծարաւ էր հայրենիքի թշնամու արիւնը խմելու։

Հէնց այդ րոպէին Հասանն ու Ճնճղուկը աջ ու ձախ թևերն անցնելով՝ իւրաքանչիւրը մի կողմից գոռացին։

—Դէ՛ քաջ զինուորներ, դէ՛ հայ կտրիճներ։ առա՛ջ, անա՛հ, աներկիւղ, միասին կռուենք, միասին մեռնենք։

Այս խօսքերը լսելով, հայ զօրքերը գրոհ տուին, գոռացին և իշխանների հետ թաթարների վրայ ընկնելով, իրար ետևից փռոտեցին թշնամիների լեշերը։ Մի քանի ժամուայ մէջ դիակների թիւը չորս հազարից անցաւ։ Մնացածնե-

ը, որը վիրաւոր, որը սարսափահար հազիւ շունչը բերաններին կարողացան պատերազմի դաշտից գլուխներն ազատել ու փախչել դէպի Կոլ-ղուաց երկրի խորքերը։

Հասանն ու Ճնճղուկը հետևելով հալածեցին փախչողներին ու բոլոր նրանց երկիրը աւարի ու հրդեհի մատնելով վերադարձան Թոռնևան։

Ժ.

Հասանն ու Ճնճղուկը յաղթանակով հայրենի գաւառը մտան. ժողովուրդը գոհութեան և օրհնութեան ձայներով նրանց դիմաւորեց։ Աղջիկները դարնանային սիրուն ծաղիկներ էին թափում նրանց ոտների տակ։ Ժողովրդից որը հաց մեկնելով էր ողջունում նրանց գալուստը, որը աղ. իսկ շատ խաշնատէր ու տաւարատէր էլ նրանց առաջ գառներ ու արջառներ էին մորթում, հետն էլ այսպէս բարեմաղթում.

—Սրանք ձեր ցաւը տանեն, կորիճ իշխաններ։ Տայ Աստուած առիւծ Խաչիկ գառնաք, մեր սիրուն հող ու ջուրը մշտական ձեր ձեռին ապահով պահէք։

Այդ միջոցին բազմութեան միջից անսպասելի կերպով առաջ եկաւ ծերունի Մխիթար երէցը և իշխաններին ողջունելով խօսեց։

—Այժմ տեսնում եմ, որ առիւծ Խաչիկի հարազատ որդիքն էք։ Հաւատում եմ, որ ձեր հայրը կը ների ձեզ և իւր անէծքը ետ կառնի

ձեր ազգօգուտ ընթացքը տեսնելով՝ ես ևս ետ եմ կոչում նզովքս և մեղաւոր բերանովս օրհնում ձեր կեանքը, որ ապրէք ու Սենեքերիմի կորցրած թագն ու աշխարհը վերադարձնէք։ Այսուհետև ես հանգիստ կը մեռնեմ. որովհետև աչքովս տեսնում եմ Թոռնևանի փառքի կենդանանալը։ Ապրէք յաւէտ, աննման դիւցազի քաջարի որդիք։

Իսկոյն Հասանն ու Ճնճղուկը չոքեցին և առան Մխիթար երէցի աջը։ Բոլոր ժողովրդի ներկայութեամբ երէցը հանելով նրանցից սուգի սև շորերը, փոխարէնը հագցրեց թշնամու ձեռից խլած Խաչիկի ու Իշխանիկի զարդերը, նշանները և ապա գլխներին «Պահպանիչ» ասեց։

Հանդիսաւոր գնացքը շարժուեց դէպի Նկան ամրոցը. ցնծութեան աղաղակներից օդը թնդում էր։ Հեռուից երևում էր ամրոցի բարձր աշտարակի գլխին ծածանուող դրօշը։

Ահա և երևաց Բիւրեղիկը գառնարած աղջիկների հետ.

—Իշխաններ, մեզնից էլ ընծայ ստացէք այս անարատ, անմեղ գառները, ասեց Բիւրեղիկը և գրկից մի սիրուն գառնուկ վայր դրեց։ Նրա հետ և միւս աղջիկները։

Բիւրեղիկի վրայ ցնծալով նայեց Մխիթար երէցը և ասեց.

—Ափսոս, քեզ Թոռնևանայ դուստր, որ քո շնորհքիդ ու իմաստութեանդ համեմատ վիճակ

չունես։ Ո՞ւր էր թէ քո չափ մեր իշխանազն աղջիկները հայրենիքի ցաւը հասկանային և նեղ օրերին ազատարար շունչ փչէին վհատող հոգիների վրայ։

—Անհոգ մնա, տէր հայր, պատասխանեց Հասանը սիրով Բիւրեղիկի վրայ նայելով, իւր շնորհքի համեմատ վիճակ կունենայ Թոռնեանայ Բիւրեղիկը, և իշխանուհիների սրտերի մէջ իւր ուզած շունչը կը փչի։

—Ի՞նչպէս, իշխան, հարցրեց ծերունի երէցը միամտաբար, այդ ի՞նչպէս կը լինի։

—Ինչո՞ւ չի լինիլ, տէր հայր։ Հապա եթէ առիւծ Խաչիկի հարսը դառնայ, դարձեա՞լ չի լինիլ։

—Ինչո՞ւ չի լինիլ, իշխան, պատասխանեց բարի երէցը. բայց դա երազ բան է, ո՞վ է տեսել երազը կատարուի.

—Տէր հայր, Աստուած երազն ինչո՞ւ է ստեղծել. որ հազարից մինն էլ չկատարուի. եթէ նեղութիւն քաշես Բիւրեղիկին մէկ երիտասարդ իշխանի հետ պսակես, կը կատարուի։

Ինձ բոլորովին զարմացնում ես, իշխան, խօսեց Մխիթար երէցը, լսածիս չեմ հաւատում։ Պարզ ասա, հասկանամ։ Ասենք թէ միրոպէ Բիւրեղիկը հարնացուն է, պսակողն էլ ես, բայց ո՞վ պէտք է լինի փեսացուն։

—Հէնց ես, տէր հայր, վրայ բերեց քաջ

Հասանը և Բիւրեղիկի աչքերը բռնելով մտաւ Նկան ամբոցը։

Խուռն բազմութեան առաջ Մխիթար երէցը կատարում էր գառնարած Բիւրեղիկի և Հասան իշխանի պսակի ս. խորհուրդը. և ուրախութեան արտասուքները աչքերից վարար-վարար վէր ածում։

ԲԱՑԱՏՐԵԼԻ ԲԱՌԵՐ

Ալարկոտ—ծույլ
Ականջը հալել—տեղեկացնել
Արևկող—արևի դէմ
Բհիր—հաստ ձող
Գայլագռաւ—ագռաւների չար տեսակը
Գառապիղ—երկաթէ վանդակ
Գլխից հանել—մոլորեցնել
Զառամել—ծերանալ
Թալանել—կողոպտել
Թարթափն ընկնել—սոսկում զգալ
Թրաշողում—թրերով կռիւ
Լայնաշեղբ—լայնաբերան
Լիսեռ—ճախարակի իլկի վրայի շրջանակը
Խափշիկ—սեամորթ
Խէթ աչքով նայել—նախանձ զգալ
Խուժել—թափուել
Ծղրտոց—բարձր սուր ճիչ
Ծմակ—խոր անտառ
Կարկամել—լռել
Կապարճ—նետաման
Կծղել—չորութիւնից կուչ գալ
Հեգել—գիր կապել
Հէսկի—սրունգի փաթաթան
Հոգեհան—հրեշտակ
Ձէտ—առիւծի ագի
Ճապաղած—թուլացած
Ճմեղմատել—ճոճուել ծանրութեան տակ
Մաղախ—տոպրակ
Մղկըտալ—մորմոքուել
Նախճիր—կոտորած
Նարեկ գալ—սալի վրայ մուրճերով երկաթը մի որոշ կէտում ծեծել
Նետողներ—յարձակուողներ
Շանթել—հարուածել
Շկահիւն—կռուի շփոթ, ճարճատիւն
Շամփրած պահել—խիստ տագնապի մէջ դնել
Շրմփացնել—ուժով զարկել
Որջ—գազանի բոյն
Ոճորք—առաստաղ
Ուրուր—բազէի մի տեսակը
Պաճիճ—սրունգի վրայ հագնելու բրդէ գործուածք
Պարսուտ—պարսատիկ, քար գցելու գործիք
Պինչ—քիթ-բերան միատեղ
Սիրտը բարձր ու ցածը լինել—վրդովուած լինել
Վրչալ—տնքալ, տրտնջալ
Տակն անել—ջրասոյզ լինել
Ցաք ու ցրիւ անել—հալածել
Փնչալ—ուժգին շնչել
Քիթը քաշ անել—տխրել
Օրոն անել—պաշտպանուել։

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԲԱՄԱԼԵԱՆՑ Ս.-ի «ԽՈՒՂ ԽԱՉԻԿ»

Պատմական վէպիկ.

Գինն է 25 կոպ.

Մեր մանկական մատենադարանը հարստացաւ մի նոր հրատարակութիւնով ևս։ Մի տասնեակ տարի առաջ իւրաքանչիւր հայ մանկավարժ վարանքի մէջ էր՝ թէ ի՞նչ տայ արդեօք իւր պատանի ընթերցողներին կարդալու։ Մինչև այդ ժամանակ եղած պատանեկական ընթերցանութեան գրքերը ըստ մեծի մասին անճոռնի և աղճատ թարգմանութիւններ էին, որոնց նիւթն ու հոգին օտար էր հայ մանկան համար։

Աղճատ թարգմանութիւններ և օտարախորթ բովանդակութեամբ գրքերի հրատարակութեան դարը դեռ չէ վերջացել, այսօր այդ ծաղկում է մի առանձին զօրութեամբ։ Այս հանգամանքում շատ բնական է, որ հայ ծնողներն ու դաստիարակները մի առանձին եռանդով փնտրեն և ի լոյս ընծայեն այնպիսի երկեր, որոնք թէ նիւթով և թէ բովանդակութեամբ բոլորովին հայկական են։

Բամալեանց Սը. հէնց այս տասնամեայ շրջանի պատանեկան ընթերցանութեան գոհարները մատակարարողն է եղել։ Նրա հէքեաթները մեր մանկական գրադարանների զարդն են այսօր։ Ինքը հայ գիւղացու որդի, հայ դպրոցի աշակերտ, տասնեակ տարի հայ գաւառներում թափառած և կեանքն ու լեզուն ուսումնասիրած լինելով ամենայն յարմարութիւն ունի մանկական ընթերցանութեան նիւթեր հրատարակելու։ Ցարդ հրատարակուած հէքեաթների յաջողութիւնն ևս մի մի ապացոյց է դրանց նպատակայարմար և խնամքով կազմուած լինելուն։ Նոյն հեղինակի «Ծովինար» հէքեաթի երկրորդ հրատարակութիւնն արդէն իսկ սպառուելու վրայ է։

Մեր մանկական գրադարանի աղքատութիւնն աչքի առաջ ունենալով վաղուց արդէն Թիֆլիզում մի խումբ անձինք կամենում էին հրատարակելու նպաստել և լոյս ընծայել մանկական գրքեր։

Բամալեանց Ս-ի այս փոքրիկ գրքոյկի բովանդակութիւնը պատմական մի անցք է մատչելի լեզուով և ձևով պատմուած։

Վասպուրական աշխարհի յունաց ձեռքն անցնելու օրերում նշանաւոր էր Թոռնևանի իշխան Խուլ Խաչիկը. սորա երկու մեծ որդիքը հրապուրւում են կայսեր ծառայութեամբ և գնում են Կ. Պոլիս, իսկ ծերունի հայրը և ամենափոքր որդին մնում են հայրենիքում և զոհ են լինում յարձակուող Սելջուկ թաթարներին։ Ապերախտ որդիքը

դառնում են հայրենիք յուսակտուր և զղջացած։

Սորանք ժողովրդի հետ միանալով վրէժ են առնում և ազատում իրանց հայրենի ժառանգութիւնը։

Վէպիկի գործող անձինքներից մէկն է Մխիթարիկ երէցը, հեղինակի ստեղծած տիպ, որ դաստիարակ է Խաչիկի կրտսեր որդուն։

Այս երէցի տուած խրատները մի պատմական գեղեցիկ դաս է։

Հեղինակը պատմական աւանդութիւնից շեղուելով մացրել է նոյնպէս և մի հայ գեղջկուհու տիպար, որ կոչւում է Բիւրեղիկ։

Ամբողջը մի գեղեցիկ դաս է հայոց պատմութեան, մի դաս՝ որ պատմուած է պատանիներին հասկանալի ոճով և Թամալեանցին յատուկ հայերէն ժողովրդական լեզուով։ Հեղինակը նիւթն առել է Սմբատ պատմագրից, ուր Խուլ Խաչիկի մասին բաւական երկար պատմուած է։

Այս առաջին անգամն է, որ մեր հէքեաթաբանը փորձ է անում պատմական անցքերից նիւթ քաղել և բաւական յաջողութեամբ։

Հայ մանուկների մատենադարանի համար «Խուլ Խաչիկը» մի գեղեցիկ և օգտակար գարդ է։

Գրքոյկի հրատարակութիւնը կատարուած է խնամքով, տպագրական սխալների թիւը շատ չնչին է, թուղթը և տիպն մաքուր։

Ն. Թարամեանց.

1894 թ. մարտ. «Արձագանք» № 52.

Հ.Ս.Գ.Ս. ՀԱՆՐՈՒՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ Պոլսոյ Ս. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0369940

60324

ԱՌԱՔՇԵՒՆ ԳՐՔՈՅԿՆԵՐՈՎ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐՍ.

1. Աստուած չը ճանաչող 1
2. Անմեռ աշխարհ 8
3. Աստուած աղքատի կերպում 20
4. Գալօ ափօ, սպառուած 10
5. Երկու աղբերացեղ. բ. տպագ. 30
6. Ժամանակը ոսկի. պատկերազարդ. . . . 40
7. Ծովինար. բ. տպագ. տպագրութիւն . . . 20
8. Հէքեաթներ 30
9. Շէն թագաւոր. բ. տպագ. 20
10. Սիրելի հերոս կամ բաջ Ազատի 25
11. Խուլ Խաչիկ. բ. տպագրութիւն 25
12. Փոքր գրուածներ ու. կապուկ. 40

Հարցնել Թիֆլիսի գրավաճառների մօտ.

Մեծ քանակութեամբ գնողներին նշանաւոր զեղչ։ Դիմել հեղինակին. հասցէն՝ Ներս. դպրան Ուս. Քամպիանց Ս.

Տպագրութեան համար պատրաստ են

1, Ազգային առակներ (10 հատ)։ 2, Հէքեաթներ բ. կապուկ. 3, Կռուի խնձոր, պատմ. վէպիկ։ 4, Վարդան կամ գիւղի երէց, պատմ. վէպիկ։

891.99
Ի-17